

ՍՈՒՆԱ ԿԱՆՅԱՆ



ՆԱ

ՆԱ

«Նա» վիպակը պատանեկան խենթ ու եթերային սիրո պատմություն է, որի երիտասարդ հերոսները հայտնվում են կյանքի փրփրաշատ ու այլեղոժ հորձանուտում: Պատմության հիմքում իրական հերոսներ են ու իրական հույզեր, վիպակի վարակիչ անկեղծությունը, գեղեցիկ ու գրագետ շարադրանքը, ձեզ կդարձնի գործող հերոսների՝ հույզերի, հույսերի ու հուշերի անմիջական կրողը...

ՍՈՆԱ ՎԱՆՅԱՆ

ՀՏԴ 821.19-1
ՀՄԴ 84 (5Հ)-5
Ս 551

Նա: Վիպակ /Հեղինակ՝ Ս. Վանյան .-Երևան
Ս 551 Հեղ. հրատ. 2020 թ

*«Նա» վիպակը հեղինակի՝ Սոնա
Վանյանի, թվով 3-րդ, քայց արձակի ժանրում՝
առաջին տպագիր երկն է:*

Երևան 2020



Մինչ այսօր էլ աչքերիս առաջ նրա հաղթական կերպարն է՝ բարձր, սլացիկ կազմվածք, ամպագույն աչքեր, որոնք շատ հազվադեպ էին ժպտում:

Ուսուցիչների սիրելին էր՝ հարգանքով ու չափազանց հոգատար, խելացի և ընդունակ աշակերտ էր, բայց ցածր էին գնահատականները, քանի որ դաշտի աշխատանքների պատճառով ժամանակ չէր մտում դասերը պատրաստելուն: Նրան հազվադեպ կարելի էր տեսնել հասակակիցների հետ խաղալիս. ունեցած ազատ ժամանակը նախընտրում էր աշխատել, որպեսզի կարողանար հոգալ իր և հիվանդ մոր կարիքները:

(Մենք համադասարանցիներ էինք և վերջին 3 տարին իրար կողք էինք նստում): Ի տարբերություն ինձ՝ նա երբեք դասից չէր ուշանում և միշտ ընկերաբար նախատում էր՝ «մի՛ ուշացիր, որովհետև ես մտածում եմ, որ չես գա և ուզում եմ՝ ես էլ տուն գնամ»: Սկզբում նրա այս խոսքերին առանձնապես ուշադրություն չէի դարձնում, մինչև չպատահեց այս դեպքը:

Այդ ժամանակ սովորում էինք 8-րդ դասարանում. ուսումնական տարվա առաջին ամիսը դեռ չէր ավարտվել: Դասղեկը օրը մի քանի անգամ կրկնում էր, որ շտապենք վճարել դասագրքերի գումարը, մի քանի աշակերտներից բացի, չէինք վճարել նաև մենք: Այդ օրը, մինչ իմ դասարան մտնելը, նա երկուսիս դասագրքերի գումարն էլ վճարել էր, զարմանքն ու զայրույթը ինձ դարձրին անկառավարելի.

-Դու ի՞նչ գումար ունես, որ մի հատ էլ իմ փոխարեն ես վճարել:

-Ցանկացել եմ ու վճարել,- հայացքը գետնից չկտրելով պատասխանեց դասընկերս,-ինչո՞ւ ես կարծում, որ ես ոչինչ անել չեմ կարող, ես աշխատում եմ ու տղամարդ եմ, կարող եմ քեզ էլ պահել, ուր է թե... Այստեղ ձայնը կտրուկ կանգ առավ և մի վայրկյանում ճերմակ այտերը նմանվեցին մեր այգու կարմրաթուշ դեղձերին:

-Ի՞նչ,- ձայնիս հեգնախառը երանգ հաղորդելով ասացի ես:

-Ե...ե... ես... ոչինչ, ուղղակի ուզել եմ ու վճարել, էլ բան մի՛ հարցրու, ուզել եմ ու վե՛րջ,-փոքր-ինչ վրդովված պատասխանեց նա:

Ուղիղ հինգ անգամ փորձել եմ դասագրքերիս գումարը փոխանցել նրան, բայց երբեք չվերցրեց, այլևս ելք չունենալով մի օր գումարը ձեռքիս գնացի նրանց տուն: Մտածում էի՝ կեսօր է, տանը չի լինի, գումարը կփոխանցեմ մորը ու արագ դուրս կգամ, բայց ի զարմանս ինձ՝ տանն էր, մորն էր կերակրում:

Այդպես էլ չհասկացա իմ այցից զարմացա՞վ, ուրախացա՞վ, թե՞ բոլորը միասին ... Իմանալով գալուս նպատակը՝ գումարն ուժգին սեղմեց ձեռքիս մեջ, զգուշացնելով՝ չհամարձակվես: Ձեռքը մոտ մի քանի րոպե պահեց ձեռքերիս մեջ ու այլևս ոչինչ չխոսեց, ես էլ էի լուռ...

-Տեսնում ես, թե ոնց եմ ապրում, բայց դա կապ չունի, ես դա սիրով եմ վճարել, իմ կամքով ու դա պարտք չի, էլ չբերե՛ս,-արագ-արագ խոսեց նա ու ինձ, գրեթե, հրեց դեպի դռան կողմը:

Ես դուրս եկա, չափազանց զայրացած էի, բայց նաև՝ անզոր, հոգիս ճնշված էր ինչ-որ անսովոր ու անանուն զգացումով. հպարտություն է նման ընկեր ունենալը:

Հաջորդ օրը, որոշել էի հետը ընդհանրապես չխոսեմ, ո՛չ մի բառ, ո՛չ մի տառ, բայց ներքուստ հպարտություն էի զգում, անբացատրելի մի բան, որ գուցե զգացածիցս շատ ավելին էր և դեռ չունեի անուն: Երբ դասերն ավարտվեցին, չնկատեցի անգամ ինչպես վերցրեց պայուսակս և դուռս թռավ, երբ շնչակտուր հասա նրան՝ մի կուշտ ծիծաղեց վրաս և պայման դրեց՝ միջև չլսես ինձ պայուսակդ չես ստանա: Մեր զրույցը երկար չտևեց, բայց երկար ու նաև անմոռաց կմնա հիշողությանս մեջ: Նա բացատրում էր, որ իր արարքը արված է բարի սրտով և իմ նեղանալը զուր է, դրանով ես կորցնում եմ անակնկալի արժեքը և նույնիսկ վիրավորում իրեն:

Ես ամենաքիչն էի ուզում նեղացնել մեկին, ով առաց այն էլ ապրում էր նեղ ու ընչազուրկ:

Առավոտներն այլևս չէի ուշանում, նա գալիս էր մեր բակ և միասին էինք դպրոց գնում: Նա խելացի ու հաճելի զրուցակից էր , նրա հետ ծանծրանալն անհնարին էր, եթե եղանակը թույլ էր տալիս, ապա նաև իրենց այգում մեր դասերը միասին էինք պատրաստում:

Ես գիտեի, որ նրա հայրը զոհվել է պատերազմում, բայց երբեք չէի խոսում այդ մասին, մինչև մի օր ինքը չհարցրեց:

-Իսկ դու գիտես՝ ի՞նչ է պատերազմը:
-Պատերազմի մասին գիտեմ գրքերից և նաև պապիկս է պատմել, ասում էր, որ այդ ժամանակ տան տղամարդիկ գնում են պատերազմ ու շատերը էլ հետ չեն գալիս: Արի՛ չխոսենք պատերազմից ես վախենում եմ:

-Ես չեմ վախենում պատերազմից, եթե ուզում ես ապրել խաղաղ երկրում պիտի պատրաստ լինես նաև պատերազմի: Պատերազմը մեր խաղաղ ապրելու իրավունքն է: Հայրս արցախյան պատերազմի ժամանակ գնաց ու այլևս չեկավ, բայց, եթե նորից պատերազմ լինի՝ ես էլ եմ պատրաստ գնալ ու կռվել:

-Լա՞վ է, մեծ-մեծ մի՛ խոսա, պատերազմ գնացողիս նայիր, դու նույնիսկ մեր դասարանի Վաղինակի հետ չես ուզում կռվել, քեզնից ինչ պատերազմ գնացող,-սովորությանս համաձայն նորից խոսեցի առանց մտածելու և զգալով, որ խոսքերս կարող են վիրավորել նրան՝ ձեռքս ձեռքին հպեցի ու անսովոր սարսուռ զգալով կտրուկ հետ քաշեցի, բայց ձեռքերս գերի մնացին նրա տաք ու փափուկ ափերում:

-Դե՛ կտեսնես, որ պատերազմ լինի ես առաջին գնացողը կլինեմ ու կիմանաս, որ հենց այնպես չեմ խոսում: Վաղինակի կամ մյուսների հետ կռվելով չի,

որ պիտի իմ ուժը ցույց տամ,-ապա, գրեթե, շշուկով ավելացրեց, -իսկ, որ բանակ գնամ, դու ինձ կսպասե՞ս:

-Բոլորս էլ կսպասենք, երկու տարին երկու օրվա պես կանցնի,- պատասխանեցի ես՝ հպարտ հայացքով նայելով ապագա զինվորին:

-Ինձ քո սպասելն է պետք,-գրուցակցիս ձայնը սկսեց դողալ:

-Դե ես էլ բոլորի մեջ եմ,-փորձեցի կատակելով շեղել սպասվելիք խոսակցությունը:

-Մենք այլևս փոքր չենք և ես չեմ ուզում զգացմունքներս պահել գաղտնի, հասկացի՛ր, դու ինձ համար միայն սովորական դասընկեր չես, քեզ հետ ես ուրիշ եմ դառնում, դառնում եմ ավելի ուժեղ, վստահ, անպարտելի,-նա այս խոսքերն այնպիսի առոզանությամբ արտասանեց, որ ինձ թվաց բեմի վրայից է խոսում:

-Չէ՛ եդպես չեղավ, դու չարաշահում ես մեր ընկերությունը, դու չես կարող ինձ սիրել,-բառերը մտքիցս առաջ էին ընկնում և ասես դուրս թռչում ինքնաբերաբար:

-Քո սրտում մեկ ուրիշը կա՞,-վերջին բառն արտասանելիս ձայնը կտրուկ բարձրացավ:

-Դե՛ դա արդեն կարևոր չի, ինձ այդպիսի հարցեր մի՛ տուր, արդեն ուշ է, ես գնում եմ:

-Մի՛ գնա, էլ չեմ խոսի,-նա իրեն մեղավոր զգաց, հասկացավ, որ շտապել էր...

Ես չէի սիրում նրան, բայց նաև անտարբեր չէի, նրա հանդեպ ունեի հոգատարության ու հպարտության զգացում, չեմ խաբի, մի փոքր էլ խիղճս էր տանջում: Շատ հաճախ նրա մոտ էի գնում, որ զգամ, թե ինչպես է երջանկանում, թեկուզ միայն իմ մեկ ժպիտից: Ուրիշ էր նա, այնքան խորն էր հոգին, այնքան նուրբ ու բարի, որ երբեմն չէի հասկանում, թե իմ, որ արժանիքի համար եմ պարգևատրվում նման ջերմ ու անմնացորդ սիրով, մինչդեռ իմ տվածը միայն ուշադրություն էր, բայց ոչ՝ սեր:

«Մենք ընդամենը ընկերներ ենք» շարունակ կրկնում էի ես, իսկ նա ի պատասխան բացականչում էր՝ «մենք կյանքի ընկերներ ենք»:

Դասարանում ոչ մեկ չգիտեր նրա զգացմունքների մասին, առհասարակ սակավախոս ու սակավաժպիտ էր ընկերս: Նա գիտեր, որ միասին լինելու, որևէ հույս չկա, բայց նաև զենքերը վայր չէր դնում: Մի օր ականջիս լուրեր հասան, որ նա և մեր մյուս դասընկերը՝ Վաղինակը սուր վիճաբանություն են ունեցել, ցավալի էր գիտակցել, որ իմ անունն էր պատվում որպես կռվախնձոր: Հաջորդ առավոտ փորձեց հնարավորինս խույս տալ իմ հարցերից, իրենց վիճաբանությունը համարելով տղայական չարաճճիություն, շտապեց հանգստացնել ինձ ասելով.

-Զգիտես Վաղինակին, կռվի համար խելքն իրենը
չէ:

Օրեր անց ամեն ինչ պարզ դարձավ. Վաղինակը ցանկացել է ինձ խոստովանություն անել, իսկ նորաթուփ երկրպագուս կանգնեցրել է նրան ասելով, որ մենք սիրահար զույգեր ենք:

-Ես ո՞նց կարող եմ սիրել քեզ,-հարցրեցի նրան, երբ արդեն տուն էինք գնում:

-Ինչու՞, ի՞նձ չի կարելի սիրել,-ծայնի մեջ զսպված վիրավորանք կար:

-Ինչու՞ ես խաղում անվանս հետ, ինչու՞ ես խաչ քաշում մեր այս ազնիվ ընկերության վրա քո անխմաստ ստերով:

-Ես սիրում եմ քեզ, դժվար է հասկանալ,-ասելուն պես գրկեց ինձ, ես հազիվ ազատվեցի ձեռքերի ճնշումից և մի շառաչյուն ապտակ հասցրի դեմքին:

Այլալվեց, աչքերից ասես կայծեր դուրս թռան, բայց չկորցրեց իրեն. ես զգացի նրա շուրթերի տաք հևոցը իմ դողացող շուրթերին: Իմ առաջին համբույրը եղավ շատ պատահական, սակայն հուշերիս մեջ մինչ այսօր էլ ամենաքաղցր ու անզին նվերն է, որ ունեմ նրանից: Շատ թանկ էին նրա հետ անցկացրած վայրկյաններս, ավիստս այն ժամանակ չէի գիտակցում, հիմա է, որ մի ամբողջ կյանք կտայի, միայն թե թեկուզ մեկ վայրկյան հայտնվեր կողքիս: Չեմ ուզում շատ բան պատմել մեր պատանեկան խենթություններից, որովհետև պատմել կնշանակի այն դարձնել բոլորինը, մինչդեռ նա միայն իմն է,

միայն իմը, նրա հետ կապված հուշերը ջերմ են, անջնջելի...

Դպրոցի ավարտական տարիները շատ արագ անցան, ակնթարթի պես...

Մոտենում էր վերջին զանգը, բոլորս անհամբերությամբ և սրտի անսովոր թրթիռով պատրաստվում էինք միջոցառմանը, իսկ նա միշտ բացակայում էր, որևէ փորձի չէր ներկայանում:

Պատճառը մոր հիվանդությունն էր, որն օրեցօր հյուժվում էր, միաժամանակ հյուժելով նաև որդուն: Ես դասերից հետո շտապում էի իրենց տուն՝ թարմ մրգեր և քաղցրավենիք էի տանում մորը, այս ամենը բոլորվին նրանց սրտով չէր:

«Մենք կարիքավոր ենք, բայց ամեն ինչ էլ ունենք, բալի՛կ ջան»-շարունակ կրկնում էր մայրը և վստահ եմ ինքը ևս իր ասածին չէր հավատում:

Իմ այցը նրանց թախծաօդ տանը վերածվում էր լիարժեք տոնի, իսկ ես այդ տնից հեռանում էի միշտ դառն տպավորություններով և ճնշված: Ես սիրում էի նրան, բայց դա սեր էր, դա գուցե ավելին էր, քան՝ սերը, այս զգացումը մի բառով չեմ կարող բնորոշել, այն և՛ հոգատարություն էր, և՛ հարգանք, և՛ խղճահարություն, և՛, և՛, բայց ոչ սեր...

Չէ՛, չէ՛ ես որևէ իրավունք չունեի նրան խղճալու, նա այնքան հպարտ էր, այնքան յուրահատուկ, որ խղճալ նրան կնշանակեր ոչնչացնել և ճզմել նրա զգայուն սիրտը, սիրտ, որ միայն ինձ սիրել գիտեր և ինձնով ապրել:

Իմ երկրպագու-դասընկերն որքան համարձակ էր, նույնքան և՛ ամաչկոտ: Մի օր դասերից հետո, երբ արդեն տուն էինք գնում՝ խնդրեց իմ գրականության գիրքը, ասելով, որ իրենը կորցրել է՝ կսովորի անգիրը և կվերադարձնի: Երկու ժամ անց՝ կանգնած էր մեր պատշգամբում.

-Ահա գիրքդ, շնորհակալ եմ,-ասաց նա հազիվ լսելի ձայնով:

-Այդ ե՞րբ հասցրիր սովորել,-հարցրի զարմացած:

-Դե՛, ես սովորեցի, ինչու՞ է քեզ միշտ թվում, թե ես ծույլ և անընդունակ եմ:

-Ո՞վ քեզ նման բան ասաց,-հարցին հարցով պատասխանեցի՝ մտովի վերհիշելով խոսքերս. միգու՞ցե իրոք ասել եմ, որովհետև, անկեղծ կլինեմ և կխոստովանեմ, որ, իսկապես, նրա մասին այդպիսի կարծիք ունեի:

-Ես գնացի, կրկին շնորհակալություն գրքի համար, կգա օրը դու կփոխես իմ մասին ունեցած կարծիքդ: Ես մի պահ քարացած, ասես ինչ-որ երազից արբեցած դեռ նրա հեռացող ոտնաձայներին էի հետևում, երբ սթափվեցի այն պահին, երբ գիրքը ձեռքիցս ընկավ:

Գրքի էջերից քառատակ ծավված թուղթ ընկավ, մտածեցի, որ երևի իր նշումներն են և շտապեցի ճշտել կասկածներս: Թուղթն ինձ ուղղված նամակ էր, վերնագրված այսպես՝ «Ինձ մի՛ սիրի, բայց մի՛ էլ խղճա»: Ավա՛դ, նամակը չեմ պահում, բայց կփորձեմ

մոտավոր ներկայացնել բովանդակությունը: Առաջին մի քանի նախադասությամբ պատմում էր իրենց ընտանիքի մասին, ապա նրբորեն անցում էր կատարել դեպի իր զգացմունքների նկարագրությունը, նշել էր, որ առանց ինձ չի պատկերացնում իր օրը, հետագա կյանքը, թեև շատ լավ գիտակցում է, որ ներկայիս ապրելակերպը նույնիսկ բավական չէ կատու պահելու համար: Հավաստիացնում էր, որ, եթե կատարվեն իր նպատակների թեկուզ 10%-ը, ապա կկարողանա իր նորաստեղծ ընտանիքի համար ապահովել արժանավայել կյանք:

Այն ժամանակ դեռ խակ պատանիներ էինք և մեզ թվում էր, թե ապրել գիտենք ու աշխարհի բոլոր գիտելիքներն էլ անգիր ենք արել:

Մոտենում էր ուսումնական վերջին տարին, բոլորս արդեն կողմնորոշված մեր ապագա մասնագիտությունների ուղղությամբ՝ ջանասիրաբար պարապում էինք: Ես ընդունվեցի Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետ, իսկ ռազմական բժիշկ դառնալու ցանկությունը նրան բերեց Երևան:

-Ես հետ եմ գալու, որ ամուսնանանք,- խոստացավ և արցունքի երկու խոշոր կաթիլ տեսա աչքերում:

-Ես կավարտեմ ուսումս և կվերադառնամ մեր դպրոց, կկրթեմ մեր համագյուղացի փոքրիկներին,-

Ես էլ իմ հերթին խոստումներ տվեցի, մինչդեռ երկուսիս էլ անհայտ էին ճակատագրի թաքցրած անակնկալները:

Հիվանդության պատճառով մայրը չկարողացավ ընկերակցել որդուն, վերջինս մնաց գյուղացի հարևանների հսկողության և հոգածության ներքո: Այժմ էլ դեռ ականջներիս մեջ հնչում է մոր ու որդու այդ օրվա հուզախեղդ երկխոսությունը.

«-Ների՛ր մամ, ես ինձ գերադասեցի հիմա, որ հետո կյանքի կոչեմ իմ, քո ու հորս երազանքը:

-Աստված քեզ հետ որդի՛ս, մինչև աչքս չցամաքի չեմ դադարի սպասել ու հուսալ»:

Մեր գյուղը հեռու չէր մարզկենտրոնից, բայց Վանաձորում եղել էի ընդամենը 2 անգամ. մի անգամ հարսանիքի, մի անգամ էլ՝ թաղման արարողության:

Իմ մեջ տպավորվեց թաց ու խոնավ քաղաքը իր հյուրընկալ և ջերմ ընդունելությամբ: Ապրում էի համակուրսեցուս հետ, որը իմ հասակակիցն էր և մեր հարևան գյուղից: Արփին, իսկապես, նման էր արևի՝ ժպտերես, պայծառ, վառվուն աղջնակ էր, թե՛ նրա, թե՛ ինձ համար սկսվել էր կյանքի հետաքրքիր, բայց անորոշ շրջան: Ես, երբեմն նախանձում էի ընկերուհուս, շատ հաճախ ուշանում էի դասից, որպեսզի նրա հետ չքայլեմ. նրա կողքին ինձ ոչ մեկ չէր նկատում:

Արփին կապուտաջա, բարձրահասակ, սպիտակամոթ օրիորդ էր, փափուկ ու շատ փայլուն, շոկոլադագույն վարսերով: Ես շատ էի տարբերվում նրանից՝ փոքր, նշածև աչքերս է՛լ ավելի անարտահայտիչ էին դառնում մեծ ապակե ակնոցներ կրելուս պատճառով: Ես գեր չէի, բայց նաև չունեի Արփիի նրբիրան և սլացիկ կազմվածքը: Իմ ինքնագնահատականը կտրուկ բարձրացավ, երբ մի օր համալսարանի աստիճանների վրա պատահաբար հանդիպեցի նրան՝ իմ դասընկերոջը, այն տղային, ով առաջին անգամ ինձ հետ խոսեց սիրո և ամուսնության մասին - Ես քիչ էր մնում չճանաչեի քեզ,- շփոթված ասացի Ես՝ ջերմորեն սեղմելով ինձ մեկնած ձեռքը:

- Ես՝ էլ,- կարճ պատասխանեց նա:

Դասընկերոջս հուսահատ տրամադրությունը չվրիպեց աչքիցս.

- Դու քեզ նման չես, ի՞նչ է պատահել;

- Գյուղից եմ գալիս, մորս վիճակը շատ վատ է, բժիշկները ապրելու հույս չեն տալիս:

Այնքան շշուկով էր խոսում և այնպես երկյուղած, որ վայրկյան առաջ շտապեցի գրկել նրան, շատ բան էի ուզում ասել, բայց բառերը խրված էին կոկորդումս:

- Ամեն ինչ լավ կլինի, միայն թե երբեք չկորցնես հավատդ,- այսքանը կարողացա ասել, թեև հասկացա, որ նրան գրկելս արդեն իսկ հավասարազոր էր հազարավոր բառերի:

-Է՛լ ավելի ես գեղեցկացել, երևի երկրպագուներդ անթիվ-անհամար են,-փորձեց փոխել զրույցի թեման, բայց դեմքին նկարած ժպիտը և ամպագույն, թախծախառը աչքերը մատնում էին հոգու դատարկությունը:

-Հիմա միայն գրքերի հետ եմ ընկերություն անում,-ամբողջ հոգով ցանկացա ժպտալ, հուսալով, գոնե մեկ ժպիտով սպիացնել կյանքի պատճառած հարվածների ազդեցությունը, բայց ջանքերս իզուր անցան. դժվարությամբ ձեռք բերված ժպիտս բախվեց կոպիտ իրականությանը՝ թախիժը թաղված էր աչքերում, իսկ ժպիտը, ժպիտը մոռացել էր շուրթերի հասցեն: Մի պահ տիրեց բազմաբառ, բայց անշշուկ լռություն....

-Ես երբեք չեմ կարողանա երջանկացնել քեզ, ես ոչինչ չունեի ու չունեցա, երջանի՛կ եղիր, իսկ ինձ, եթե դեռ հիշում ես մոռացի՛ր, դա ընդամենը մանկական սեր էր, ես քեզ ոչինչ չեմ կարող տալ, շատ ճիշտ արեցիր, որ երբեք էլ չսիրեցիր ինձ,-ևս այս խոսքերը այնպիսի զզվանքով արտաբերեց և այնպիսի ցավով, որ անգամ քար սիրտը արցունք կթափեր, բայց ինքն իրեն խոսեց ու հեռացավ՝ առանց պատասխանիս սպասելու:

Քայլում էի և բառ առ բառ վերհիշում խոսքերը.«ինչու՞ չկարողացա սիրել նրան», հարցիս պատասխանը ինձ համար էլ մնաց չբացահայտված:

Ուսանողական կյանքը նման չէ դպրոցական տարիներին, այս տարիները երևի թե մարդու

կյանքի ամենակարևոր ու հիմքային շրջանն է: Դպրոցում դեռ երեխա ենք, կյանքի չորն ու ցամաքը, սևն ու սպիտակը չենք տարբերում, ծաղրում ենք ու ծիծաղում, չենք սովորում ու գնահատվում ենք: Ուսանողական կյանքը որքան լի է հետաքրքիր արկածներով, նույնքան և պատասխանատու ու ժամանակատար շրջան է: Ես սովորում էի բանասիրական ֆակուլտետում և՛ որքան լսարաններում էինք լինում, երկու այդքան էլ՝ գրադարաններում: Կրթությունս ևս ինչ-որ չափով մեղավոր էր իմ ունեցած ռոմանտիկական և հեքիաթային պատկերացումների համար, որոնք, ցավոք, փշրվում էին կյանքի դառը իրականությամբ:

Նա ուրիշ էր, նման չէր իմ կարդացած հերոսներին, քանի որ գոնե գրքերում խեղճ ու կրակ կերպարները մերթնդմերթ համոտեսում են կյանքի քաղցր պտուղներից, իսկ իմ հերոսի դեպքում՝ ճակատագիրը միայն սև գույնն էր օգտագործել:

Մեր հաջորդ հանդիպումը եղավ մոր հուղարկավորության օրը: Անտես աչքը անգամ կարող էր չափել հոգում ծովացած արցունքների խորությունը, և քար սիրտն անգամ կարող էր պայթել տեսնելով նրա դառնադի կսկիծը: Նրան մոտենալու համարձակություն չունեի, բայց ոտքերս ականա քայլեցին դեպի նա, որքան անգամ էր ինքը ձեռքս բռնելու ցանկություն հայտնել և անհաջող փորձեր ունեցել, իսկ հիմա ես եմ նույն դրության

մեջ, բայց չէի կարող ոչինչ չասել՝ ներսումս հրաբուխ էր, իսկ ընկերս անչափ՝ հպարտ:

-Դու մենակ չես, մենք բոլորս կողքիդ ենք, - ավելի հարմար բառեր չգտնելով խոսեցի ես՝ մոտենալով նրան:

-Ես արդեն միշտ մենակ եմ,-կարճ պատասխանեց նա:
Այսքանով ավարտված համարելով չհաջողված մխիթարությունս պատրաստվում էի միանալ կանանց, երբ բոլորովին անսպասելի ինդիքեց մնալ և ասաց.

-Ե՞րբ ես քաղաք գնալու:

-Վաղը չէ մյուս օրը,-պատասխանեցի ես և քիչ առաջ խոնարհած հայացքս վեր բարձրացնելով՝ հանդիպեցի նրա թախծախառն, բայց ներքին փայլը ներսում անթեղած աչքերին:

-Կուզե՞ս վաղը հանդիպենք,-ի սրտե առաջարկեցի ես:

-Կուզե՛մ,-հնչեց նրա դողացող ձայնը:
Լուսաբացը նույնքան տխուր ու խոնավ բացվեց ինչպես աչքերս, նրա մայրը իմ մանկության քայլող հուշերից էր, այլևս նրան, իրենց փոքրիկ այգում չտեսնելու մտքի հետ դժվարությամբ էի հաշտվում, բայց հենց այս դեպքերում պետք է հիշել անմահ լոռեցու տողերը. «մենք ամենքս հյուր ենք կյանքում մեր ծննդյան փուլչ օրից....»:

Ես և նա հանդիպեցինք գյուղի կարկաչահոս առվակի մոտ, մի քանի օրվա մեջ մարմինս այնպես

Էր ճգնվել ու բարակել, որ եթե չիմանայի եկողը նա է՝
չէի ճանաչի:

Միմյանց ողջունելուց հետո փորձեց տեղավորվել կողքիս դրված քարի վրա, բայց քարը հանկարծ գլորվեց և քիչ էր մնում նա էլ գնար քարի ուղղությամբ, չկարողացա ժպիտս թաքցնել, նա էլ ժպտաց, որը այնքան նման էր անձրևից հետո երևացող արևին:

-Բախտս ոչ մի տեղ չի բերում,-դեմքին երևացող ժպիտը ինքնաբուխ էր, որը սակայն շտապեց տեղը զիջել դեմքի առավել մտախոհ արտահայտությանը,- մայրս էլ էր սիրում այս առուն, ասում էր, որ առուն գյուղում գրհված հերոսամայրերի չցամաքող արցունքն է:

-Ոնց չեմ հիշում, մայրդ ինձ համար շատ անգամներ է կարդացել իր գրած բանաստեղծությունները, քո ասած համեմատությունը դրանցից մեկի մեջ կար, հիշեցի,- ուրախ ու ժպտուն պատասխանեցի ես:

-Հա՛, մաման տեղովը քայլող պոեզիա էր, ինչքան նուրբ ու մեծ էր հոգին,-տխուր հիշողություններից մռայլեցին երբեմնի պայծառ աչքերը և արցունքի մի կաթիլ այտերն ի վար ճամփա ընկավ:

-Գիտես, մամայիդ մոտ մի քանի անգամ կարդացել եմ իմ գրածներից, ինձ շատ էր ոգևորում, ասում էր, որ գրվածքի մեջ կարևորը անկեղծությունն է և հույզը, իսկ տեխնիկական

խնդիրները ժամանակի ընթացքում կհարթվեն, մինչդեռ մայրս այսօր էլ նույն այն մտքին է, որ իմ ստեղծագործելը զուր ժամանակի կորուստ է,- ստեղծված հուշապատ քաղցր զրույցին փորձեցի մեկ այլ գույն էլ հաղորդել:

-Ի՞նչ, դու գրո՞ւմ ես, բա ինչու ես երբեք ոչինչ չեմ կարդացել,-հիացական հայացքը հառեց աչքերիս:

-Դե՛, դե՛, դե՛... չէի ասի, որ գրում եմ, ուղղակի մտքերս եմ մեկ-մեկ թղթին հանձնում ու պահում, գիտես ստեղծագործելը լուսանկարելու պես մի բան է՝ անմահացնում ես զգացածդ ու ապրածդ պահը, որը, այլևս նույն ձև չի կրկնվի,- պատասխանեցի ես, հուսալով, որ զրուցընկերս չի խնդրի որևէ բան արտասանեմ:

-Որ խնդրեմ մի բան կասե՞ս գրածներիցդ,- փաստորեն զրույցի ընթացքը ճիշտ էի գուշակել:

-Լավ էլի, ես գրածներս անգիր չեմ հիշում, խոստանում եմ մի օր կկարդամ,-փորձեցի հնարավորինս խուսափել խնդրանքը կատարել, ինքս էլ չգիտեմ՝ ինչու՞...

-Դու միշտ էլ հետաքրքիր ու տարբերվող ես եղել, չեմ զարմանա, եթե մի օր էլ քո հեղինակային գիրքը նվիրես,-ժպիտը կարճատև էր, բայց միանգամից շողացրեց դեմքը, ապա, շարունակեց,- համալսարանում երևի երկրպագուների պակաս չունես և՛ գեղեցիկ ես, և՛ տաղանդավոր, և՛...

-Է՛լ մի...,-ծեռքերով փակեցի բերանը,-ես գյուղից գնացել եմ, որ սովորեմ, մասնագիտություն ստանամ, ոչ թե երկրպագուներ հավաքեմ,-փորձեցի նեղացած ձևանալ:

-Դե՛ էլ քիթիկդ մի՛ կախիր, կատակում եմ,-ծայնի մեջ անհանգստություն ու սրտացավություն կար,-թույլ կտա՞ս,-այս ասելով նրբորեն բռնեց ձեռքս և մոտեցրեց շուրթերին;
Ես էլեկտրահարվածի պես ձեռքս շտապ հետ քաշեցի, բայց նա բաց չթողեց:

-Սպասի՛ր, խնդրում եմ, դու պետք ես ինձ, քո աչքերում է իմ աշխարհը, քո ժպիտի մեջ է արարելուս ուժը,-դողում էինք երկուսս էլ, առվակի կարկաչուն ծիծաղը ամենևին համահունչ չէր մեր հոգու ձայնին` դասընկերոջս ձայնը վշտոտ էր, հուսահատ, ես դեռ` անորոշ ու շփոթահար:

-Բա հիմա ինչ ես անելու, մի գուցե քեռուդ առաջարկությունը ընդունե՞ս ու գնաս Ֆրանսիա,-փորձեցի գրույցի թեման փոխել:

-ՉԷ՛, երբեք, գոնե իրենք գան, ինձ են կանչում, չի՛ լինի նման բան, ես Ֆրանսիայում կորցրած բան չունեմ, իմ տեղն էստեղ է, իմ հայրենիքում, որտեղ իմ ծննդավայրն է ու ծնողներիս շիրիմը:

-Ամեն դեպքում, գնալդ ճիշտ կլինի, մեր Հայաստանում ապագա չկա, բոլորը բարձրագույնավարտ գործազուրկներ են, ջահելություն չկա,-անկեղծորեն արտահայտվեցի:

-Դու հիմա էլ ոչ մի բառ չես խոսում, թե չէ կսպանեմ քեզ,-ծեռքերով թեթևակի հպվեց պարանոցիս,-մեր տղաները իրենց կյանքը ես հողի համար զոհել են, որ մենք չթողնենք անտեր ու ամայի, հիշի՛ր, մեր ապրած ամեն մի օրը մի չապրած կյանք արժի, մեր այսօրվա համար է, որ իրենք այսօրը չեն տեսնում,-աչքերը փայլում էին վրեժխնդրության ու հպարտության բուսորագույն կայծերով:

-Զգևա՞նք, ես արդեն մրսում եմ,-ասեցի ես ձեռքերս շփելով:

-Դու վաղը գնում ես, իսկ ես Աստված գիտի՝ մեկ էլ երբ կտեսնեմ քեզ,-այս խոսքերն ասելիս այնպես անպաշտպան թվաց, որ նրան անմիջապես գրկելու ցանկություն ունեցա;

-Ես միշտ քեզ հետ կլինեմ, հեռավորությունը կապ չունի,-մենք գրկախառնվեցինք և ես զգացի, թե ինչպես է հողը փախչում ոտքերիս տակից, անասելի դողում էի և միաժամանակ ունկնդրում նրա սրտի հետզհետե արագացող զարկերը...

-Ես քեզ կորցնելու համարձակություն չունեմ, մոռացի՛ր ձեր համալսարանի մոտ ասածս խոսքերը, ես սիրում եմ քեզ ու միշտ եմ սիրել ու միշտ եմ սիրելու...

Վանաձորի խոնավաշատ քաղաքը այս օրերին համեմատաբար ջերմ էր և արևոտ, քիչ դեր չխաղաց նաև հոգումս վառվող կրակը: Ես երագում էի ապրել քաղաքում, իմ պատկերացմամբ քաղաքում ապրելը

հոգսաշատ չէ, առավել հանգիստ է, խաղաղ: Գյուղում ստիպված ես շուտ արթնանալ, այգի գնալ, հավերին, կովերին և մյուս անասուններին դուրս հանել, կերակրել, ինքդ էլ թաթախվես գոմաղբի և այլ վատահոտ բույրերով: Քաղաքի աղջիկներն ու տիկիկները ուրիշ են՝ գեղեցիկ, խնամված, կիրթ, տղամարդիկ ևս տարբերվող են, առավել կնամեծար են, գրագետ, գյուղացիների պես չեն խոսում կոպիտ, բարձր ձայնով և անընդմեջ:

Իմ պատմվածքներում կերտած հերոսներիցս ոչ մեկին գյուղում չբնակեցրի, խղճացի նրանց, մինչդեռ ճակատագիրը իմ հանդեպ նույնքան բարեհաճ չգտնվեց՝ կյանքիս լավագույն տասնյոթ տարիներն անցան գյուղում: Երբեմն երևակայությանս թեթև խաղիկներով փորձում էի ենթադրել, թե ինչպիսին կլինեիր իմ կյանքը, արտաքինը, եթե ծնված լինեի՝ օրինակ մայրաքաղաքում: Հաստատ ավելի նուրբ կլինեին դիմագծերս՝ այժմյան կարմիր այտերիս ու պեպենոտ քթիս փոխարեն, քաղաքում նորաձև հագնվելը առավել քան հասանելի է, իսկ գյուղի նորաձևությունը թելադրում են տեղի առևտրական կանայք՝ ինչ բերեցին այն էլ գնում ենք, չկա ընտրության հնարավորություն:

Օ՛ր ինչպես եմ սիրում մեծ քաղաքների բանուկ, վաճառաշատ փողոցները, գույնզգույն մեքենաներն ու վաճառասրահները, գեղեցիկ ու նորաձև հագնված կանանց, գործնական հոգուկապով տղամարդկանց, որոնք բոլորն էլ որպես կանոն

ունեն մեկ ընդհանրություն՝ միշտ շտապում են: Երևանում միայն մեկ անգամ եմ եղել. դասարանով եկել էինք ինչ-որ տոնակատարության, նույն օրը հասցրինք այցելել նաև Մատենադարան, Կենդանաբանական այգի, մանկական զբոսայգի: 12-ամյա աղջնակը հայտնվել էր երազանքների քաղաքում, անընդհատ շուրջբոլորս էի նայում հիացած ու ակնապիշ, չեմ թաքցնի, այո՛ նախանձում էի այստեղ ապրող մարդկանցից յուրաքանչյուրին:

Երբ ծանոթացա Արամի հետ, առաջին իսկ պահից հասկացա, որ ուզում եմ հնարավորինս երկար շփվել նրա հետ, ուզում էի առավելագույնս մոտ լինել նրան, ասես Արամը երկնքից էր ուղարկված՝ նա եկել էր, որ կյանքի կոչի իմ երազանքները:

Արամը բարձրահասակ էր, թիկնեղ, մոխրագույն աչքեր ուներ, որոնք կրակոտ էին և կյանքով լի: Ես նրան շարունակ խնդրում էի պատմել Երևանից, երևանցիներից, իր առօրյայից: Արամը քսան տարեկան էր, սովորում էր Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

Բնավորությամբ հաստատակամ էր, ինքնավստահ, շատ գեղեցիկ էր խոսում, մայրաքաղաքի խոսելաոճը ինձ այնքան հոգեհարազատ էր, որ երբեմն ես էլ էի փորձում խոսել նրա պես, առհասարակ սիրում էի անել այն ամենը ինչ նա էր սիրում, մենք նույնիսկ նույն գիրքն

Էինք կարդում. ավելի ճիշտ ես սկսեցի կարդալ այն գիրքը, որ նա էր կարդում:

Գիրքն ավարտելուց հետո՝ մենք որոշեցինք հանդիպել և քննարկել, սուր բանավեճ սկսվեց: Ես որպես բանասեր՝ Մովսես Խորենացուն պետք է ներկայացնեի գրականագետի տեսանկյունից, իսկ նա՝ պատմաբանի: Դե երևի արդեն պարզ դարձավ, որ մեր քննարկման նյութը՝ Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունն էր: Երկուսս էլ լավ էինք պատրաստվել, կարողանում էինք մեր խոսքը հիմնավորել անհրաժեշտ փաստերով, մեջբերումներով: Արամը ինձ մոտ շատ խելացի և գիտակ ուսանողի տպավորություն թողեց, իսկ իր հայացքից ենթադրելով կարծես թե իմ մասին ունեցած նրա պատկերացումները ևս դրական էին: Չնայած այս ամենին ես դեռևս չէի հասկանում. արդյո՞ք սիրահարվել եմ նրան, բայց կանացի բոլոր զգայարաններս հուշում էին, որ նա ինձ համակրում է:

Արամը մեկ շաբաթ անց վերադարձավ Երևան, նա եկել էր հանգստանալու Վանաձորում ապրող իր տատիկի մոտ. նրա տատիկն էր մեր վարձակալած բնակարանի վարձատուն: Արամի հետ հեռացավ նաև իմ ռոմանտիկական հույսերի ու քաղցր հուշերի հսկայական փունջը: Արամի գնալուց հետո օրերը դարձան միապաղաղ և անհետաքրքիր, արևաշող քաղաքը կրկին թվաց խոնավ ու արցունքոտ: Ես տարվել էի Արամով, մինչդեռ նա՝ իմ դասընկերը,

անվերջ պտտվում էր ուղեղումս: Ակամա երկակի խաղ էի սկսել. ոչ մեկին չէի սիրում, բայց երկուսն էլ դարձել էին հավասարապես թանկ ու հարազատ:

Արամը դարձավ իմ և Արփիի ամենօրյա զրույցի ամենաքննարկվող թեման: Անկեղծ կգտնվեմ և կխոստովանեմ, որ ես, գրեթե, համոզված էի, որ Արամը հրապուրված է իմ գեղեցկատես ընկերուհով:

-Արփի՛, կուզեի՞ր Արամի պես ընկեր ունենաս,- հերթական զրույցի ժամանակ հարցրի նրան:

-Արամը շատ լավ տղա է, բայց ինձ համար չէ,- պատասխանեց Արփին փոքր-ինչ շփոթված,-իմ կարծիքով նա քեզ է հավանում:

Այսպիսի պատասխանն ինձ շոկի ենթարկեց. ինչպե՞ս թե նա ինձ է հավանում, որտեղի՞ց Արփիին նման ենթադրություն, շտապեցի փարատել կասկածներս.

-Արփի՛ նա քեզ ինչ-որ բան է ասե՞լ,-ձայնս դողում էր, սրտիս զարկերը դարձել էին լսելի:-Դե, հարցրեց թե արդյո՞ք դու ընկեր ունես,- պատասխանեց զրուցակիցս և ավելացրեց,-ես էլ ասեցի, որ՝ ոչ, ընդամենը քեզնով հետաքրքրվող տղաներ են, որոնց թիվ ու քանակ չկա:

-Դու գժվե՞լ ես,-գոռացի այնպես, որ ես էլ ձայնիս տոնայնությունից սարսափեցի,-հիմա ինչ ասես, որ չի մտածի և մեղավորը կլինեն քո անփույթ ու անհիմն խոսքերը, գոնե խոսելուց առաջ մտածեիր, թե Աստված քեզ միայն գեղեցիկ գլուխ է տվել, որ տղաների ուղղությամբ թեքես,-ասացի ես

միաժամանակ չթաքցնելով զայրույթս ու նախանձս, թեև գիտակցում էի, որ խոսքերս գուցե վիրավորեն նրան: Բայց Արփիի դեմքին հայտնված ժպիտը գոտեպնդեց ինձ և ցրեց մտահոգություններս:

-Որ լավ մտածես կհասկանաս, որ ես օգնել եմ քեզ, եթե Արամը իսկապես հետաքրքրված լինի քեզնով, ապա լուրջ քայլեր կձեռնարկի՝ գիտակցելով, որ դու ունես ընտրության այլ, բազմաթիվ հնարավորություններ,-Արփին թեթևակի հարվածեց ուսիս ավելացնելով,-իսկ նա՞:

-Ո՞վ նա:

-Դե ձեր գյուղի այն տղան, որ քեզ էր սիրահարված,-բացատրեց ընկերուհիս և ինձ զցեց նոր մտածմունքների գիրկը:

Իսկապես, եթե ես կանգնեմ ընտրության առաջ, ապա ու՞մ կտամ նախապատվությունը՝ մանկությանս հին ու բարի ընկերոջս, թե նորահայտ երկրպագուհիս, ով նաև քաղցր ապագայիս երաշխավորն էր դառնալու:

Օրեր անց կրկին Ալվարդ տատը տոնական տրամադրության մեջ էր. թոռն էր ժամանել Երևանից:

-Վա՛յ Արամ ջան, մեռնեմ ջանիդ, բա ես որ շուտ-շուտ գալիս ես տատիդ տեսակցության, բա էնտեղ դասերիդ հըմա չեն խոսո՞ւմ վրեդ,-իրեն հատուկ հոգատարությամբ անհանգստանում էր մեր տատը:

-ՉԷ՛, ա՛յ տատ, հանգիստ եղի՛ր, մեր ամբիոնի վարիչը պապայի մտերիմ ընկերն է, ես

համալսարանում ոչ մի խնդիր չունեմ,-
պատասխանեց համալսարանի ուսանողը այդ
տարիքի տղաներին բնորոշ մեծամտությամբ, կամ էլ
պարզապես փորձում էր տպավորություն ստեղծել
իմ ու Արփիի ներկայությունից ոգևորված:

-Է՛ր բալա ջան, հերդ մի փեշ փող ա տալիս, որ
ուսում ստանաս, մարդ դառնաս, դու քամու նման
թրև ես գալիս,-շարունակում էր Ալվարդ տատը:

-Եկեք մի հետաքրքիր խաղ խաղանք էսպես
նստելով չի լինի,-թեման կտրուկ շրջանցեց Արամը և
գորովալից հայացքն ուղղեց դեպի ինձ:

-ՉԷ՛, մենք վաղը քննության ենք, գևանք,
պարապենք,-մեջ ընկավ Արփին և թևս քաշելով ներս
տարավ:

-Ես արդեն պարապել եմ, էլ բան չունեմ անելու,-
հպարտանալու առիթս բաց չթողեցի:

-Դե եդ դեպքում Արփին թող գևա պարապի, իսկ
դու, եթե դեմ չես, դուրս գանք մի քիչ զբոսնենք,-
Արամի աչքերը կարոտափայլ էին,-մերժում չի
ընդունվում, որովհետև ինքդ ես խոստովանել, որ
սիրում ես քայլել անձրևից հետո, ահա և քո սրտի
ուզած եղանակն է,-տեսնելով, որ չեմ համառում
հաղթանակի համը զգալով առավել մոտեցավ ինձ և
շարունակեց,-մենակ գևա՛ վրադ շոր գցի, չմրսե՛ս,-
ավելացրեց նա, իսկ ես արդեն չէի զգում ո՛չ ցուրտ,
ո՛չ անհանգստություն, ամենը փոխարինվել էր
Արամի ներկայության անտեսանելի ջերմությամբ:

Այո՛ իսկապես ուրիշ է դառնում օդը անձրևից հետո, ասես բոլորովին այլ, առավել մաքրագտված ու կենարար աշխարհ ես թևածում և վայրկյան առաջ ուզում ես ամբողջ թոքերդ լցնել այդ յուրահատուկ թացոտ ու անձրևաբույր թթվածնով:

-Անձրևից հետո օդը նույն քնքշություն ունի, ինչ մարդը, երբ քնից զարթնում է և լվացվում,- դարպասներից դուրս գալով առաջինը խոսեց Արամը:

-Շատ ճիշտ ես ու շատ տեղին եր համեմատությունդ,-պատասխանեցի գլուխս չբարձրացնելով:

-Ինչու՞ ես հայացքդ թաքցնում, էդքան սիրուն աչքեր ունես, նման աչքեր որևէ տեղ չեմ հանդիպել,- Արամը խոսում էր շտապ-շտապ, ասես խոսքի վրա վայրկյանացույց էին դրել և սահմանված ժամկետը մոտենում էր ավարտին:

-Շնորհակալ եմ, բայց ես ինձ գեղեցիկ չեմ համարում, դու այն երևաններում հազար հատ ավելի սիրուն աչքեր կլինես հանդիպած, մեր մոտ կյանքը հեշտ չի, մեր աչքերը ծնված օրից հոգևած են ու անժպիտ,-ես էլ չգիտեմ ինչու սկսեցի խոսել բառերիս հերթ չտալով:

-Էլ նման բան չասես, դու քո այդ հրաշք ժպիտով ու հրեշտակային հայացքով լավագույնն ես, որ հանդիպել ես իմ կյանքում, ես կրկին վերադարձա, որովհետև կարոտն արդեն խեղդում էր, քեզ

տեսնելու պահից վայրկյան անգամ չի եղել, որ դադարեմ քո մասին մտածել:

Արամը բավականաչափ մոտեցել էր ինձ և չնկատեցի անգամ, թե ինչպես և երբ հասցրեց բռնել ձեռքս: Ձեռքս դողում էր նրա կաթի պես ճերմակ ու անուշաբույր ասիում, իսկ ամբողջ ներսս վառվում էր անսովոր ու անանուն կրակով: Անձրևահամ օդն ու նրա օձանելիքի զգիլիչ բույրը գլխապտույտ առաջացրին, միևնույն ժամանակ զգում էի, որ նրա ներկայությամբ կորցնում եմ ինքնակառավարումս: Արամը ասես զգաց՝ ինչ է հետս կատարվում և քիչ առաջ ձեռքս բռնած ասիով գրկեց իրանս և մոտեցրեց իրեն: Մեր շուրթերը հպվեցին իրար և մինչ փորձում էի ազատվել նրա բազուկների հանկարծահաս գերությունից՝ ականջիս տակ շշնջաց:

-Ես տեսնում եմ, որ վառվում ես ինձ համբուրելու ցանկությունից, ինչու՞ հետաձգեցր իրար երջանկացնելու հաճույքը:

Նրա ինքնավստահությունը, եթե այլ դեպքերում ընդգծում էր նրա անհատականությունն ու առնականությունը, այս անգամ հասավ ցինիզմի:

-Քեզ ինչե՞ր ես թույլ տալիս,-խոսեցի հստակ ու վճռական, դեռ շուրթերիս վրա զգալով համբույրների այրոցը:

-Թույլ եմ տալիս այն, ինչը իրեն թույլ կտար ցանկացած սիրահարված տղամարդ, ոնց չես հասկանում, որ դու ինձ դուր ես գալիս:

Արամի աչքերը փայլում էին կրքի ու կրակի վառվուն բոցերով, նույնիսկ տատն էր զարմացել, որ տարին մեկ իրեն այցելող թռռը հանկարծ այսպես ուշադիր ու սրտացավ է դարձել՝ շաբաթը չլրացած նորից իր մոտ է:

Մենք բավականաչափ հեռացել էինք տնից և օրն էլ երեկոյանում էր, Արամին խնդրեցի, որ տուն վերադառնանք, իսկ նա չարաճճի ժպիտով ավելացրեց.

-Կգնանք տուն, եթե խոստանաս, որ վաղը կրկին հանդիպելու ենք:

Այլ ելք չունենալով գլխով համաձայնության նշան արեցի և ձեռքերս շփեցի, որ գոնե մի փոքր տաքանամ;

-Ինչպե՞ս թե, իմ արևը մրսու՞մ է,-ուրախ ձայնեց երեկոյի գրուցընկերս և իր պիջակը զցեց ուսերիս: Եվ, իսկապես, նրա ներկայությամբ նույնիսկ բուքն ու փոթորիկն էի պատրաստ դիմավորել, միայն թե երբեք ձեռքս բաց չթողներ: Տարվելով երանավետ երազանքներով՝ ես չկարողացա շրջանցել նրան, ում մեր գյուղի առվի մոտ խոստացա սպասել: Ի՞նչ կմտածի իմ մասին, երբ իմանա, որ Վանաձորը ինձ համար ո՛չ միայն ուսման, այլ նաև նոր սիրո օրրան է դարձել: Երբ հասանք տան դարպասներին՝ Արամը նկատեց դեմքիս մռայլությունը.

-Մի՞թե մեր զբոսանքը քեզ դուր չեկավ, կներես ինձ, եթե մի քիչ շտապեցի, պարզապես մտածեցի,

որ հասուն մարդիկ ենք և կարիք չկա տուն-տունիկ խաղալու;

-Չէ՛ ուղղակի մրսում եմ ու չէի ուզի Արփիին այսքան ժամանակ մենակ թողնել:

Արամը ինձ չափազանց մոտ էր կանգնած՝ մի ձեռքով բռնել էր ձեռքս, մյուսով սկսեց վարսերս շոյել:

-Թույլ տուր համբուրել քեզ և օրը ավարտել անմոռաց հիշողություներով:

Իմ պատասխանին չսպասելով սիրագործով շուրթերը փորձեց ինձ մոտեցնել, բայց դարպասների ճռճոռոցը երկուսիս էլ սթափեցրեց: Դռան առաջին հայտնվեցին նա և Արփին: Այո՛ նա՝ դասընկերս ում դեռ բոպեներ առաջ փորձում էի բացատրություն տալ իմ կյանքում նոր հայտնված սիրահար երիտասարդի մասին: Նրանց տեսնելով աչքերս մի քանի անգամ թարթեցի, ասես ուզում էի ինքս ինձ արթնացնել վատ երագից:

Տղաները ծանոթացան միմյանց անունները փոխանակելով, իսկ Արփին շտապեց ուրախ նոտա հաղորդել հայացքների պատերազմ հիշեցնող ծանոթությանը:

-Ձեր գյուղից ծնողներդ ծանրոց են ուղարկել, որը դասընկերդ հենց նոր բերեց, ասեցի, որ շուտ կգաս՝ սպասիր, բայց որոշեց շուտ դուրս գալ, ինչ լավ է գոնե այստեղ տեսաք իրար:

-Ես իրոք շտապում եմ, կներեք ինձ,-արագ-արագ խոսեց նա ու հեռացավ:

Ես երկար նայեցի նրա հետևից և ասես թափվող անձրևի կաթիլները, ոչ թե երկնքից էին թափվում, այլ նրա հենց նոր վրաս հառած թախծաշաղ աչքերից, աչքեր, որ մի քանի րոպեում լցվեցին անվստահության ու փշրված հույսերի ցուլքերով: Չէի համարձակվում ոտքս ոտքիս առաջ դնել, ասես միաժամանակ կորցրի քայլելու և խոսելու ունակությունս, հոգիս ճնշված էր, ցավում էր անասելի ուժով, թեկուզ միայն այն մտքից, որ մեկ գույգ աչքեր գիշերը դիմավորելու էին կարոտ հայացքով՝ լցված հիասթափության ու հուսահատության իմ կողմից մատուցված տիղմով:

Ամբողջ ներաշխարհս, ասես, անտես շերեփով խառնեցին իրար, մինչ այսօր էլ տարիների փոշին արհամարհելով հայացքիս մեջ անանց վերքի պես դաշված մնաց տխուր աչքերի թախիծը: Անարժան էի այն մեծ ու սվիրական սիրուն, որ երկնային մանանայի պես թափվեց գլխիս և բնավ չհասցրի ու չկարողացա գնահատել ինձ բաժին հասած երջանկությունը: Թեև պետք է խոստովանեմ, որ նրան չընտրելու պատճառներից մեկն էլ վերջինիս անապահով վիճակն էր, իսկ ես բնավ չէի երագել դժվարություններով լի կյանքի մասին, նման կյանք ես արդեն ունեի:

Արամի հետ ամեն ինչ ուրիշ էր, նա կարողացավ իր ինքնատիպ հումորներով և մայրաքաղաքին բնորոշ տղաների պատշաճ պահվածքով խելքահան անել դեռահաս ու անհասուն աղջնակիս սիրտը, ով

կյանքում ավելի շատ երագում էր, քան՝ ապրում: Երբեմն ինձ թվում էր, որ ես կարող եմ ապրել կյանքս ըստ իմ ծրագրավորածի, միշտ կարծում էի, որ ես էլ իմ հերոսներից մեկն եմ, որի ճակատագիրը կարող եմ կերտել իմ երևակայական, խենթ ու հեքիաթային պատկերացումներով: Գուցե ես հերոսն էի իմ երագած հեքիաթի, սակայն միշտ չէր, որ սցենարը գրվում էր իմ սրտով:

Ամեն ինչ խառնվեց իրար, Արփին մի օր անզգուշաբար խոստովանեց, որ Արամին համակրում է, իհարկե, հետո հերքեց, ինձ համոզելով, որ Արամին համակրում է որպես իմ կյանքի ապագա կողակից: Կասկածը թունավոր նետի պես սողոսկեց սիրտս, խլեց քուսս և մտքերիս հունը խախտեց: Իմ արևանման ընկերուհին աչքերիս առաջ դարձավ մեզ բաժանել ցանկացող հրեշ, արդեն իսկ ելքեր էի փնտրում, որպեսզի Արփիին տեղաշարժեմ Արամի տեսադաշտից: Բավական է Արամը նրա կողմից որևէ հուսադրող հայացք նկատի՝ վե՛րջ, ես կկորցնեմ երջանիկ ապագայիս երբեմնի շողացող հույսը: Սա ևս պատճառ հանդիսացավ, որ իմ և Արամի հանդիպումները դառնան կողմնակի հայացքներից ու հարահոս վտանգներից հեռու: Արամի պահվածքը այնքան արքայավայել էր, այնքան սրտագրավ, որ ամեն անգամ զարմանում էի, թե ինչպես կարող էր նման երիտասարդի

ուշադրությունը գրավեր իմ անշուք արտաքինն ու շահամոլ բնավորությունը:

Վերջին մի քանի օրը, ասես, կախարդված լինեի, ժամերով կանգնում էի հայելու առաջ՝ շուռումուռ գալիս, տասնյակ զգեստներ փորձում, համացանցով զանազան սանրվածքներ ու դեմքի հարդարման տարբերակներ ուսումնասիրում: Ես քայլ առ քայլ մոտենում էի իմ երագանքին. Արամը մի քանի օրից ինձ պիտի տաներ Երևան՝ իր ծնողների հետ ծանոթացնելու:

Օրը թարմ էր, կանաչը դուրեկան թաց էր, երկնքում ինչ-որ պարփակված թախիծ կար, բայց անձրև չէր խոստանում: Ես փայլում էի աշխարհի բոլոր երանգներով, հագել էի Արփիի Նուրբ կանաչավուն զգեստը, վարսերս նրբիկ խոպոպներով ընդգծել էին դեմքիս շրջանակը, քամին տաք էր, բայց անսպասելի դողից հավեցի Արամին, որի ջերմ ու կանչող ձեռքերը ասես հենց ինձ էին սպասում:

-Դու իսկական արև ես, չեմ հավատում, որ գտել եմ քեզ,-խոսեց նա, ակնապիշ հայացքը սահեցնելով ամբողջ մարմնովս: Նրա այդ հայացքը չէի սիրում, քանի որ սկսում էի քամի գրկած տերևի պես սրթսրթալ:

-Իսկ դու, ե՞րբ կգաս և կծանոթանաս ընտանիքիս հետ,-հարցիս ձևակերպումը նրան անակնկալի բերեց:

-Երբ ժամանակը գա, կգանք ու կծանոթանանք, -պատասխանեց դեմքին թեթևակի ժպիտ փայլեցնելով և համբուրեց այտս, որը արևի ծակոց հիշեցրեց:

Արամը իմ առաջին ընկերն էր, այդ իսկ պատճառով այդքան էլ լավ չէի հասկանում, թե ով ում հետ պիտի առաջինը ծանոթանար, թեև պետք է խոստովանեմ, որ այդ ավանդական կարծրատիպերը ջանում էի ժամ առաջ գլխիցս հեռու վանեի, ախր դա միայն գյուղի հնացած մտածելակերպ է, մինչդեռ քաղաքը՝ այլ է, արդիական հայացքներով և առավել առաջադեմ:

Արամի մեքենան սահուն ընթացքով առաջ էր շարժվում, նրա ձեռքին դեկը նմանվում էր արագահաս ձիու, մենք ասես ոչ թե մեքենայի մեջ լինեինք, այլ՝ ինչ-որ գեղեցիկ նժույգ հեծած, երբեմն էլ թվում էր, որ ահա ուր որ է կհասնենք ամպերին...

Աղջկական խենթ երազներս մի քանի տարի առաջ գնացին և պատկերացրի, որ Արամը և ես ամուսիններ ենք, եկել ենք Վանաձոր տատիկին այցելության, իսկ մեքենայի հետևի նստատեղին մեր երկու երեխաններն են՝ աղջիկ և տղա: Այնքան էի տարվել պատրանքներով, որ իրականության համը ճաշակելու մոլուցքով գլուխս շրջեցի՝ տեսա միայն Արամի սպորտային վերնագգեստը:

Մենք արդեն քաղաք մտանք և Երևանը մեզ ողջունեց արևաշող ու ջերմ ժպիտով, թաց ու խոնավ քաղաքը մնաց անցյալում, ես գնում էի երազանքիս

ընդառաջ...

Արամը լուռ էր, մտազբաղ, ես չփորձեցի որևէ կերպ շեղել նրան, քանի որ հասկանալի էր, որ ինքը ևս շփոթված է, հուզված. չէ՞ որ ծնողների հետ պետք է ծանոթացնի իր ապագա կնոջը:

Օգտվելով ստեղծված լուրթյունից՝ ես ևս թևածեցի իմ մտաշխարհի անհուն հեռուները. հայրս երևաց քրտնած ու անթրաշ, կողքին մայրս էր՝ նույն հնամաշ գոգնոցով և սրբիչը ձեռքին, այդ գույգը ասես հենց այդպես էր ծնվել, ինչ-որ գեղջկական ու կյանքի հոգսերից թևաթափ հայացք ունեին երկուսն էլ, որը ասես հավերժ գյուղում մնալու ճակատագրի կնիքը լիներ:

Գյուղի կյանքը ինձ համար չէ, ես չունեմ մորս հնազանդ, համբերատար ու համակերպվող բնավորությունը, իմ երազանքը մեծ ու լուսավոր առանձնատունն է, գեղեցիկ, ընդարձակ բակով, տան մի քանի սպասուհիներով, ճիշտ այնպիսին, որ տեսել էի բրազիլիական ու մեքսիկական հեռուստասերիալներում:

Մտքերիս մի ուղին էլ գնաց դեպի նա, հետաքրքիր է ի՞նչ է մտածում հիմա, ի՞նչ է զգում իմ հանդեպ՝ հուսահատությո՞ւն, սե՞ր, թե՞...

Աչքերիս առաջ նորից նրա ամպագույն, թախծախառն հայացքն էր՝ լցված տեսանելի, բայց չհոսող արցունքներով:

Մտքերս շեղելու նպատակով սկսեցի ուսումնասիրել հիասքանչ մայրաքաղաքը, պատկերները ֆիլմի

կադրերի պես փոխվում էին՝ մե՛րթ նորակառույց շենքերն էին, մե՛րթ նորածն հագուկապով և ժպտուն աչքերով անցորդները, մե՛րթ քամու հաճելի համբույրներն էին, որ խառնում էին վարսերս...

Արամի մեքենան կանգ առավ շքեղ շինության առաջ, այն առաջին հայացքից նման չէր առանձնատան, մինչ տարված էի անսովոր և անորոշ զգացումներով՝ սիրելիս ձեռքս բռնեց և հանգստացրեց ինձ ասելով.

-Հասանք արև՛ ջան, մենք ուղղակի մի քիչ շուտ ենք եկել, ծնողներս մոտ 15 րոպեից կմիանան մեզ,- նա խոսում էր վստահ և գեղեցիկ,-դե՛ քեզ ազատ ու անմիջական զգա, մի՛ լարվիր, ես կողքիդ եմ այսօր, վաղը և ընդմիշտ: Նրա խոսքերը ինձ համարձակություն ներշնչեցին, փորձեցի ժպտալ և դուրս գալ մեքենայից, բայց ոտքերս ասես քարացել էին, չէին ենթարկվում...

Արամը գնում էր առջևից, ես լուռ և գլխահակ հետևեցի նրան: Բարձրացանք սալիկապատ, նեղ աստիճաններով և հայտնվեցինք մի ընդարձակ, լուսավոր սենյակում, սենյակի շուրջքուրդը զարդարված էին հազվագյուտ նմուշի լուսամփոփներով, սենյակը այնքան լուսավոր էր ու ջերմ, որ մի պահ թվաց արևը ամենօր այստեղից է ծագում:

-Սա է մեր սենյակը, նե՛րս գնանք,-ասաց Արամը ինձ ուղեկցելով կաշվեպատ դռներից մեկը:

Սենյակը, ուր ներս մտանք շատ շքեղ ու ճաշակով էր ձևավորված ու մինչ հիացած շուրջբոլորս էի նայում Արամն ասաց.

- Քանի դեռ ծնողներս չեն եկել, ի՞նչ կարծիքի ես՝ չէիր ուզի ինձ ավելի մոտիկից ճանաչել,-խորամանկ ժպիտը դեմքին մոտեցավ ինձ և անսպասելիորեն գրկի մեջ առնելով իջեցրեց շրջագգեստիս շղթան: Վիրավոր թռչունի պես թայրտացի և վայրկյան առաջ ջանացի ազատվել նրա հաստ ու ջլապինդ բազուկների գերուբայությունից:

-Ի՞նչ ես անում, հիմա՛ր,-բղավեցի ես վազելով դռան կողմը և իմ շտապողականությունից կոշիկը ոտքիցս դուրս թռավ:

Կարծես թե շարունակվում էր Մոխրոտիկի հեքիաթը, միայն թե արքայորդին իսկական հրեշ էր: -Ամուսնության ձգտող աղջիկը չպետք է խուսափի ամուսնական պարտականությունները կատարել,-ցինիկ ծիծաղը չկարողացավ զսպել և կոշիկս վերցնելով թաքցրեց իր հետևում, ապա շարունակեց,-կտամ կոշիկդ, եթե մի համբույր տաս:

Ես թեթևակի համբուրեցի նրա արդեն տհաճ ու զազրելի այտը, իսկ Արամը վարսերիցս քաշելով գլուխս մոտեցրեց իրեն և ծարավածի պես համբուրեց շուրթերս, պարանոցս, ապա ձեռքի ճարպիկ շարժումով ձեռքերս ամուր սեղմեց, ականջիս տակ շշնջալով.

-Այսօր դու իմն ես լինելու իմ փոքրիկ, վիրավոր թռչնակ:

Ես, իսկապես, այդ պահին նման էի վիրավոր և անպաշտպան թռչնակի, ում բանտարկել են վանդակում և ոչ մի ձայնին չեն արձագանքում;

-Դու խաբեցի՞ր ինձ, ստո՞ր, անախտա՞ն, ատում եմ քեզ,-աչքերիս հեղեղը չէր դադարում, ասես սիրտս փշրեցին ոտքերիս տակ, իսկ ապագայիս վառ ու լուսաշող հույսերը թափեցին բաց պատուհանից:

Ինձ թվում է հենց այդ օրը հասունացա, նրբիկ մատներով շոշափելով երազախաբույթյան դառնածով բեկորները,-հետ տա՛ր ինձ, անասուն...

-Ձայնդ կտրի՞ր, դու իրոք, որ երեխա ես, լավ է մամա՛-մամա՛ չես կանչում,-խոսեց առանց դեմքիս նայելու և ծխախոտի հերթական գլանակը վառեց:

-Քո սիրո խոսքերը սուտ էին, դու օգտվեցի՞ր իմ անմեղությունից ու միամտությունից, խաղացի՞ր զգացմունքներիս հետ, որ հետո անպետք իրի պես դուրս շարտե՞ս,-խոսում էի և բնավ չէի ուզում գիտակցել, որ այդ ամենը ինձ հետ է կատարվում, պատրաստ էի հազար անգամ հարվածել գլխիս, կամթել մարմնիս բոլոր հատվածները, միայն թե այս ամենը տհաճ երազ լիներ, բացեի աչքերս և հայտնվեի իմ փափուկ ու թարմաբույր անկողնում:

-Չէ՛, չէ՛, ի՞նչ ես ասում, ես քեզ ոնց կարող եմ դուրս շարտել, սա իմ մշտական սիրաբունն է, կգաս, երբ ցանկանաս, դե կարող ես նաև գինդ ասել՝ ես վճարունակ եմ:

Արամը ինձ էժանագին լրբի տեղ էր դրել, մինչդեռ երեկ խոստովանում էր, որ իրեն միշտ էլ գրավել են գեղջկական պարզ ու ամոթխած աղջիկները: Պատրաստ էի սպանել նրան ձեռքիս առաջին իսկ պատահած իրով, բայց ձեռքերս դեռ նրա հաղթանդամ մարմնի ծանրություն էին զգում ...

-Հիմա ասա՛ տեսնեմ՝ ի՞նչ կուտես, ի՞նչ պատվիրենք,-Արամը այնպես հանգիստ ու անվրդով էր, ասես ոչինչ էլ չի պատահել և մենք նստած են քաղաքի սրճարաններից մեկում:

-Նարնջի հյութ կուզեմ և խմորեղեն,- պատասխանեցի ես հազիվ լսելի ձայնով, մտովի փախուստի պլաններ մշակելով: Արամը դուրս եկավ դուռը դրսից փակելով, չմոռանալով մի սահմուկեցուցիչ հայացք գցել վրաս, աթոռից վերցրեց հագուստս և շարտեց իմ ուղղությամբ.

-Հագնվի՛ր, չմոռես,-խոսեց շեշտակի և դուրս գալով փակեց դուռը՝ բանալիի երկու երկարատև պտույտով:

Ես զգվում էի իմ գարշահոտ եռթյունից, առաջին անգամ սկսեցի ատել ինձ, ի՞նչ անել, ինչպե՞ս ապրել այս մեղքի ծանր բեռը ուսերիս: Ժամանակ չկար, արագ հագնվեցի և կանգնեցի անմիջապես դռան ետևում: Սկզբում մտածում էի, որ դուռը վրաս չի փակի և նրա դուրս գալուց անմիջապես հետո փախուստի կդիմեմ, բայց ստեղծված հանգամանքներից ելնելով ստիպված էի այլ ծրագիր

մտածել:

Երբ Արամը սկուստեղով բերեց պատվերը, ես ուժգին հրեցի նրան և դուրս փախա: Հարվածս հաջող էր. Արամը մի ակնթարթում փռվեց գետնին, բաժակները փշրվեցին, որոնք չափազանց փոքր փշրանքներ էին իմ կոտորված երազների և փոշիացած ապագայի հետ համեմատած: Քայլում էի դեռ մեկ ժամ առաջ իր շքեղաշուք փայլերով հոգիս գերած մայրաքաղաքով և ասես բոլորվին այլ վայրում էի: Ես ատեցի Երևանը՝ իր շփացած երիտասարդության, փուչ հարստության, ժպիտ նկարած դիմակների ամբողջական համակարգով:

Ու՞ր գնալ, որտե՞ղ ապաստան փնտրել, ու՞մ դիմել, երբ մեծ ու անծանոթ քաղաքի մասին անուկից բացի ոչինչ չգիտես:

Քայլերս տարան դեպի մի բարձրուղեշ կամուրջ, հեռուստացույցով շատ էի լսել նման կյանքախեղ վայրերի մասին, բայց առաջին անգամ էի տեսնում նրա անտակ խորությունը, քարքարոտ անկյունները: Պտտվում էի ցնորվածի պես և սատանայական մտքերը հանգիստ չէին տալիս:

Ընդամենը մի փոքր համարձակություն և վերջ կդրվեին անավարտ ու անհուն տանջանքներիս, կավարտվեր չսկսված կյանքիս պատմությունը:

Ի՞նչ կզգային ծնողներս, իմանալով տասյոթամյա դստեր անուղեղ արարքի նախապատմությունը՝ ցա՞վ կզգային, ամո՞թ,

հուսահատություն, թե՞ բոլորը միասին, ինչ նպատակով էին քաղաք ուղարկել, ինչպիսի քրտնաջան աշխատանքով էին պահում և հոգում ուսման վարձը և ահա ինչ արդյունքի են հասնում:

Իսկ նա՞... Ես կլինեմ նրա համար երրորդ հարազատ կորուստը, միգուցե մեր վերջին հանդիպումից հետո այլևս սիրո նշյուկներ չեն մնացել, կամ ով գիտե, գուցե սիրտը դեռ բաբախում է անարժան ու աննամուս աղջկա համար: Վերջին միտքը այնքան ջերմություն հաղորդեց սառած մարմնիս, որ մի պահ վերստին կենդանության շունչ ստացա: Այնքան հաճելի է զգալ ինչ-որ մեկին անհրաժեշտ լինելու բերկրանքը, որ ասես թևեր ես ստանում անավարտ թռիչքի: Տարված նրա սիրո վերջին փշուրները բռանա մեջ պահելու ջմարող հույսով՝ մտքերս թռան դեպի հայրենի գյուղ: Այո՛, հիշում եմ, հենց այն գյուղը, որից գայլ տեսած նապաստակի պես փախա դեպի մարզկենտրոնի երջանկավետ հորիզոնները, այնտեղից էլ հանգամանքների բերումով շարտվեցի մայրաքաղաք, որ երազներիս աշխարհում խեղդեմ երազներս...

Ձեռքի անսպասելի հպումը կիսաշունչ մարմնիս սառը ցնցուղի ազդեցություն թողեց և սթափեցրեց անրջային, հուշաշեն սիրիից:

Մի՞թե Արամը հետապնդել է ինձ և կրկին բացվելու են թվացյալ դրախտի դժոխագույն դարպասները...

Մեռելատենչ հայացքս կյանքի մոռացված գույներով պարուրվեց, երբ տեսա ինձ մոտեցած ոստիկանի զարմացած, բայց նաև զսպված զայրույթով կանաչավուն աչքերը.

-Ձեզ ի՞նչ մոծակ է կծել, ի՞նչ եք ապրել, որ արդեն կյանքից հեռանալու որոշում եք կայացրել:

-Ես ուղղակի նայում էի ներքև, փորձելով հասկանալ, թե ինչ են զգում մարդիկ կյանքի վերջին վայրկյաններին,-արցունքախեղ ժպիտս չգիտեմ ինչ տեսք հաղորդեց դեմքիս, որ մռայլ ոստիկանի աչքերը շողացին:

-Ձեր վիճակից դժվար չի ենթադրել, որ կյանքի արտաթորանքներից մեկին եք հանդիպել և զարշահոտը ներծծվել է ձեր մարմնի բոլոր բջիջները,-բարեհամբույր ոստիկանը ամեն ջանք գործի էր դնում փորձելով ցրել ընկճախտս և շարունակեց դեմքի բարեկամական արտահայտությամբ,-կլինի՞ ձեր դեմքը այսօր ինձ տաք մի քանի ժամով, որպեսզի գնամ գործընկերոջս տատիկի հուղարկավորությանը:

Անսպասելի համեմատությունը սրտովս էր, ինչը նորածիլ ժպիտի մի նոր արմատ տնկեց:

-Ինձ կօգնե՞ք հասնեմ Վանաձոր,-խնդրեցի նրան սաստիկ ամաչելով, բայց, ավա՛ղ, այլ ելք չունեի:

-Իսկ ինչ է դուք Երևանի՞ց չեք,-հարցրեց զրուցակիցս:

-ՉԷ՛, ես Վանաձորից եմ և մոլորվել եմ քաղաքում, դրամապանակս և հեռախոսս էլ գողացան,-ստեցի ես՝ ամաչելով:

-Ո՞վ էր, տեսա՞ք դեմքը, ե՞րբ է տեղի ունեցել կողոպուտը,-հարցերի տեղատարափը թափեց գլխիս բնավ չկասկածելով, որ գուցե մի հանցակից էլ ես եմ:

-Չեմ հիշում ոչինչ,ասես ցնորված լինեմ, ասես հիշողութթյունս ավլել են ու ջնջել, ոչինչ չեմ հիշում,-պատասխանեցի ես՝ հուսահատ և մեղավոր հայացքս խոնարհելով:

-Ոչինչ աղջիկս, մենք մի բան կանենք, բայց նախքան այդ գնանք ոստիկանատուն և դու ցուցմունք կտաս քիչ առաջ կատարված կողոպուտի մասին:

-ՉԷ՛, չԷ՛, ես ամաչում եմ, երեք հազար դրամ էր որջ դրամապանակիս կապիտալը, դրա համար չարժի մարդկանց իրար խառնել, ես մորաքրոջս տուն կգնամ՝ մոտակայքում են ապրում, ձեզ էլ շատ շնորհակալ եմ,-խոսեցի արագ-արագ և շտապեցի վայրկյան առաջ հեռանալ, բայց ծանոթ կերպարանքի հանդիպելով՝ ստիպված էի կանգ առնել:

-Ես գիտեի, որ չէիր կարող հեռու փախչել,-Արամն էր, որը չգիտես ինչպես գտավ ինձ և ձեռքիցս քաշելով տարավ դեպի իր մեքենան, արյունը գլխիս խփեց, բայց ինձ չկորցրի՝ գոռացի վազելով քիչ առաջ ինձ հետ զրուցող ոստիկանի ուղղությամբ:

-Օգնեցե՛ք,-բղավում էի ձայնիս ողջ հզորությամբ, անցորդները քարացած ինձ էին նայում, վստահ եմ նրանցից ոմանք երևի ինձ «խեղճ աղջիկ» կոչեցին, ոմանք էլ շտապեցին՝ «գիժ» որակել, ինչևէ ոչ մեկ չմոտեցավ, միայն անտարբեր ու կիսահեգնական հայացքներով չափչփեցին և ամենքը հեռացան իրենց գործերով:

Մեծ քաղաքում ոչ մեկին չի հուզում քո խնդիրը, այստեղ մարդիկ էլ նույնքան անմատչելի ու անհասանելի են, ինչպես ամեն քայլափոխի վեր խոյացող բարձրահարկ շինությունները: Սա մեր գյուղը չի, որտեղ ամեն մեկը գիտի, թե ընթրիքին ում սեղանին ինչ է դրվելու:

-Սա՞ է այն տղան, որ կողոպտել էր ձեզ,-մեզ մոտենալով հարցրեց ոստիկանը ակնոցն ուղղելով և գողունի հայացքով զննելով Արամին, -վա՛յ Արամ ջան դու՞ ես, ո՞նց ես տղա ջան, պապան ո՞նց է...

Նրանց այս տարօրինակ ջերմությունն ու անսպասելի ծանոթությունը կասկածի հազարավոր փշերով խոցոտեց արյունաքամ հոգիս և հուսահատությունս է՛լ ավելի անկառավարելի դարձավ:

Արամը ևս անակնկալի եկավ չալանավորված հանդիպումից և վայրկյանների ընթացքում հրեշային, գազանաբարո դիմախաղը մեղմացավ փոթորկից հետո խաղաղված ծովի նմանությամբ:

-Պապան լավ է, մերսի, դուք ո՞նց եք, ձեր տղային արդեն բանակ տարա՞ն,-հարցրեց Արամը

քաղաքավարության բոլոր նորմերը պահպանելով, կարծես հյուրանոցի բռնաբարոզը ինքը չէր:

-Դե ճիշտն ասած ուզում էի այս մի քանի օրը հորդ հենց այդ խնդրանքով դիմել, դե եթե մեր տղերքն էլ պիտի գնան թշնամու բերան մտնեն, էլ ինչացու ենք մենք,-խորամանակ ժպիտը դեմքին մի քանի անգամ թմթմփացրեց Արամի ուսը, ապա հայացքը վրաս հառելով շարունակեց,-բա ես մեր սիրուն աղջկա հետ ի՞նչ գործ ունես:

-Իմ հին ծանոթներից մեկի հետ էի շփոթել, մի լիրբ կա ինձ գումար է պարտք, կորած է, չեմ կարողանում գտնել, մտածեցի ինքն է, բայց սխալվեցի, անհարմար վիճակ ստացվեց, խեղճ աղջկան էլ մի լավ վախեցրի, կներեք ինձ-Արամը կողքս կանգնած այնպես վարպետորեն էր ստում, որ քիչ էր մտում ինքս էլ հավատայի շինծու խեղկատակի բարբաջանքներին:

-Ոչի՞նչ, պատահում է,-պատասխանեցի նրան կատարելով խաղի իր հորինած սցենարի իմ բաժինը:

Աչքերիս չէի հավատում, մի՞թե Աստված խղճաց իր գոհին և որոշեց օրը ավարտել երկնային նվերով՝ դիմացս կանգնած տաքսին դարձավ փոթորկահույզ ծովում փրկության հուսատու նավ:

-Խնդրում եմ ինձ տարե՛ք Վանաձոր,-հազիվ լսելի ձայնով աղերսեցի քառասունին մոտ վարորդին և այլևս անկարող լինելով արցունքներս սեղմել

ազատ արձակեցի և գլոր-գլոր շոշափեցի նրանց
ամեն կաթիլը:

Արցունքները հավաքեցի ափերիս մեջ և մաքրեցի
զգեստիս փեշով: Ես էլ արցունքի մի ջինջ կաթիլ էի՝
նույնքան մաքուր և անաղարտ, քանի դեռ ինձ էլ
ափերի մեջ չառան և վրաս մաքրեցին իրենց
կեղտոտ ոտնահետքերը:

Մեծ քաղաքից հեռանում էի ապագայաստեղծ
հույսերիս բեռնաթափված հավատով:

Ամեն ինչ նույն էր. մարդիկ կրկին ժպտում էին և
ինչ-որ տեղ շտապում, միջքաղաքային
տրանսպորտը ուրախ եռուզեռի մեջ էր, օրը՝
անուշաբույր և միայն ես էի փոշիացած:
Ահա մոտենում եմ հարազատ հանգրվանիս՝ իմ
չքնաղ Լոռվա մշտածիծաղ ժայռերին, արևոտ ու
ջերմաջերմ բնությանը, որ միշտ քաղցր աչքով է
նայել վրաս և մայրաբար փաղաքշել: Ուրիշ է մեր
Լոռին, ամեն անկյունն է հյուրընկալ և
հեքիաթային...

Մեքենան արդեն մոտենում էր Վանաձորի մեր
վարձակալած տանը, բայց ես մոռացել էի, որ
վարորդին վճարելու հնարավորություն չունեմ,
տանս հոգեպահուստը ևս անմխիթար վիճակում էր:

-Օ՛ր ինչպես էի մոռացել, ընկերուհիս, որի հետ
համատեղությամբ ապրում ենք Վանաձորում այժմ
գյուղ է գնացել և ինձ մոտ էլ բանալի չկա, ցավոք
պետք է գնանք մինչև մեր գյուղ,-տեղեկացրի

վարորդին ստեղծված անհարմար վիճակի համար մի քանի անգամ ներողություն խնդրելով:

-Էս դրախտային բնության մեջ կարող եմ մի ամբողջ շաբաթ անընդմեջ վարել մեքենաս և չհագենալ, ճիշտ է ես հիմա Երևանում եմ ապրում , բայց ուղևուծուծս Լոռվա կողմերից է. 17 տարի ապրել եմ Ալավերդի քաղաքում,-ոգևորված պատմեց վարորդը՝ ընկղմվելով հուշերի մեղրածոր հորձանուտում:

Մի պահ ինքս էլ ուրախացա, գիտակցելով, որ դեռևս ժամանակ ունեմ մտքերս հավաքելու և ստեղծված իրավիճակը ծնողներիս ներկայացնելու համար անհրաժեշտ պատճառներ հորինելու:

Մեքենան սրընթաց առաջ էր սլանում, մինչդեռ Երևանից իմ տեղափոխությունը միայն ֆիզիկապես էր, հոգուս և մարմնիս անվերադարձնելի մի մասը մնաց այնտեղ՝ այն հեքիաթից պոկված, անրջային հյուրանոցում:

Մեքենան կանգ առավ մեր ժանգոտ դարպասների առջև, որոնք այդ պահին այնպիսի պաշտպանվածության զգացողություն փոխանցեցին, որ բառերով դժվարանում եմ նկարագրել: Մայրս վազեց ընդառաջ, հայրս դարձյալ քրտնաբույր էր և չսափրված, քույրիկս ևս նույն չարածճին էր, որի աչքերում վառվում էին չպղտորված անմեղության ու աշխարհի հոգսերից չտեղեկացվածության կենսատու ջահերը: Առաջին անգամ նախանձեցի հինգամյա քրոջս, որ

ծնողներին աչքի առաջ է, առանց վախի ու տագնապի սպանիչ սպասումների...

Հայրս մեր հարևանից պարտքով գումար վերցրեց և ճանապարհեց վարորդին, երբ ինձ գումար էին ուղարկում և սպասելիքներս չէին արդարացվում՝ սրտնեղում էի, իսկ հիմա ինքս եմ տեսնում, որ հորս գրպանները ծակ են, անփող, ինքն էլ այնքան հիվանդոտ է, վտիտ:

Ա՛խ երանի թե գետինը հենց այս պահին ինձ իր ներսը քաշեր և չտեսնեի ու չգիտակցեի, այն ամենը, որ տրվել էին ինձ հորս մաշված ձեռքերի ու չարքաշ աշխատանքի գնով:

Մայրս իր սովորության համաձայն կարողացավ մտքերիս հունը արևոտել.

-Նա էլ է այսօր գյուղ եկել, -շշնջաց ականջիս,- քեզնից էր հարցնում, երևի սիրտը վկայել էր, որ գալու էս:

Նա... այդ նա-ն, որ միշտ պահապան հրեշտակի պես ուղեկցում է ինձ, մինչդեռ ինքս բնավ արժանի չեմ նման անձնուրաց երկրպագության...

Ծնողներին համար դժվար չէր նկատել, որ իմ ժպիտը ասես անփորձ նկարչի վրձնահարում լինի՝ նպատակը ժպիտ նկարելն էր, բայց այնքան անբնական էր ստացվել, որ ցանկությունս էր առաջանում տակը գրել՝ ԺՊԻՏ: Մայրս այս երեկո քնեց իմ ննջարանում, այնքա՛ն խոսելու և հիշելու պատմություններ կային, որ երկուսս էլ չկարողացանք աչք փակել: Մայրս

խաչածն հարցումներով շատ անգամ ջանաց բերանիցս որևէ խոսք հանել, բայց ես ձկան պես լուռ էի, նրա բոլոր տիպի հարցումներին տալիս էի նույն պատասխանը՝ «ուղղակի կարոտել էի ձեզ և եկա, վատ տրամադրությունս էլ գերհոգնածության արդյունք է»: Չէի ուզում ևս մեկ անգամ անձրևապարկ ամպիկներ կախել մորս առանց այն էլ արևազուրկ ներաշխարհում:

Գիտեք, քանի անգամ լեզուս կծեցի, որ հանկարծ բառերս անդուռ բերանիցս չթափվեն, գիտեք քանի՜ անգամ աչքերս թարթեցի, որ արցունքներիս հեղեղը պատնեշեմ, գիտեք, որքա՛ն ասելիք ունեի, բայց լռել էր պետք... Լուսինը դանդաղ վեր բարձրացավ և ամուր-ամուր ծածկվեց կապտասև ապերով, փայլող աստղերը ևս հետզհետև աննկատ դարձան: Մայրս էլ այդ պահին ասես մի նեղացած լուսին էր, որ գիտակցաբար հոգուս գիշերը թողեց անխաթար, նա այլևս ոչինչ չխոսեց, իսկ ես սուզվեցի երազածով ալիքներում, թեև անցյալից ապագա կամրջող որևէ հույսափշուր չգտա:

Լուսաբացը քաղցր օր էր խոստանում, իսկ հայելուց ինձ նայող աղջնակի հայացքը աշնանամուտ էր գուժում: Ա՛խ այդ պահին որքա՛ն նման էի կարկուտ կերած ծաղկած ծառի. հոգին բողբոջել է, ճյուղերը՝ կոտրվել... Նախաճաշից հետո ես սուրճի պատրաստություն էի տեսնում, երբ մեկի խուլ հագոցը ծակեց մեր ունկերի

լսողությունը: Հայացքս վեր բարձրացրի և գտա նրան՝ ով երբեք չի կորցնում իմ հետքերը: Շապիկի մեջ մի քանի խնձոր էր բերել, առաջինը՝ ամենախոշորը ինձ մեկնեց.

-Չգիտեի, որ գյուղում ես,-հեզնախառը հայացքը կայծկլտում էր ուրախության լուսեպասակով:

-Երեկ եմ եկել, կարոտել էի գյուղս,-պատասխանեցի կիսաձայն:

-Դու՞.... դու այս գյուղի համար չես, դու քաղաքի աղջիկ ես, ինչպես ինքդ էիր ասում՝ կովն ու ոչխարը քո բանը չի,-փոքրիկ ծիծաղը նկատելի դարձրեց դեմքի փոսիկը:

-Երբ հեռացա գյուղից, այն քաղցրացավ ու նոր շնչով կանչեց,-խոսքս հնչեց հոգուցս, հպարտություն զգացի:

-Դե՛, եթե այդպես կարոտել ես գյուղը, արի՛ գնանք մի քիչ զբոսնենք,-առաջարկը անսպասելի էր, սակայն մերժելու պատճառ չունեի, թեև դժվար չէր գիտակցել մեզ սպասվելիք գրույցի դառնությունը:

-Ո՞վ է այն տղան, որ ձեր տան առաջ բռնել էր ձեռքդ, ի՞նչ գործ ունի քեզ հետ,-խոսեց նա, երբ դեռ նոր էինք բակից դուրս եկել:

-Դա քո գործը չէ,-շեշտակի պատասխանս զարմացրեց նրան:

-Ե՛ս... ե՛ս... չհավանեցի նրան, մի՛ եղիր իմը, թե այդպես կուզես, բայց խոստացի՛ր, որ չի լինի նաև նա, ես նրա մասին ավելին գիտեմ, քան՝ դու:

-Ի՞նչ գիտես, ո՞վ է եղել տեղեկատվական աղբյուրդ,-զարմանքից մնացի տեղումս քարացած:

-Ինչու՞ կանգնեցիր, արի՛ մի փոքր էլ բարձրանանք մի քանի րոպեից կհասնենք խաչի մոտ:

-Դու իմ հարցը կտուրը մի՛ գցիր, ի՞նչ գիտես Արամի մասին,-համառեցի:

-Գիտեմ, այն, որ նա չի՛ կարող լինել քո կողքին, ավելորդ հարցեր չտաս, մեկ է այլ բան չեմ ասելու, քո իմանալու բանը չի,-նա կանգնեց իմ դեմ հանդիման և մատերի ծայրերով խաղաց վարսերիս հետ՝ Է՛լ ավելի ինձ մոտենալով:

-Խելոք ես, լավ էլ կպատմես,-զենքերս որևէ կերպ չցանկացա վայր դնել և մի քանի քայլ առաջ անցա:

-Նա արդեն համբուրե՞լ է քեզ,-հարցրեց և քաշեց ձեռքս դեպի իր կողմ, ապա առանց իմ պատասխանին սպասելու շարունակեց,-սիրում եմ քեզ, սիրում եմ մեր Դեբեդի անծայր երկարությամբ ու ամենօրյա վարարող սիրով, ինձ հանկարծ ավերից չհանես, ես ուժեղ փրփրել գիտեմ: Ժպտացի, իսկ նա, կուլ տվեց ժպիտս իր համբույրների խենթացնող համով:

-Ի՞նչ ես անում, հիմա՛ր,-փորձեցի խույս տալ նրա անօրեն պահվածքից:

-Մայրս սովորեցրել է միշտ պայքարել հանուն երջանկության, ես էլ մորս խոսքից հետ չեմ կանգնում,-նա ինձ Է՛լ ավելի ամուր իր գիրկը առավ

և հավելեց,-ամուսնացի՛ր ինձ հետ, իմ լու՛յս, չեմ կարող քեզ էլ կորցնել:

-Ի՞նչ ես խոսում, ա՛յ խենթ, ես դեռ չափահաս էլ չկամ,-պատասխանեցի փոքր-ինչ նեղացած, բայց հոգումս իսկական կրակ էր ճտճտում:

-Ես կսպասեմ մինչև դառնաս տասնութ ու էլ ոչ մի վայրկյան չեմ թողնի, որ իմ աղավնին մենակ ճախրի:

-Իսկ, եթե ասեմ, որ ես և այն տղան՝ Արամը, որի մասին քիչ առաջ խոսում էինք արդեն ընկերություն ենք անում, ի՞նչ կանես,-որոշեցի հոգու հետ մի փոքր խաղալ:

-Ի՞նչ կանեմ, քեզ հենց այստեղ իմ սիրո և հավատարմության երդումը կտամ, ինձնով կանեմ և տեր կլինեմ ցմահ:

-Ի՞նչ երազների մեջ ես, չես հասկանում, որ ես ու դու իրար հետ անցնելիք ճանապարհ չունենք,- խոսում էի, բայց սիրտս ներսից աղաղակում էր, զգում էի, թե ինչպես եմ դողում, փշաքաղվում, երբ մեր հայացքները խաչմերուկվում են:

Նա իսկապես առավել առնական տեսք էր ստացել, առավել հասուն ու վստահ էր դարձել խոսքը. Երևան տեղափոխվելը բազմաթիվ թաքնված հմտությունների բացահայտման հնարավորություն էր տվել: Ես այդ պահին մտովի կողք կողքի դրեցի նրան և Արամին՝ անկարող եղա քարը ժայռի հետ համեմատել: Իմ առջև մեր օրերի հերոսն էր, ով ողջ

կյանքում չարչարվեց, բայց բնավ չչարացավ, ծնված օրից անիծված էր, բայց երբեք ժպիտը դեմքից չածիլեց, հավատով սնվեց, հույսով արթնացավ: Արամը ոտքի տակի քար էր, որ ուժեղ էր միայն այլ, առավել ամուր քարի հենվելուց հետո, ինքնուրույն փշրվող հողագունդ է, ներսը՝ փթախտ դատարկություն: Մինչ այսպես տարված էի մտքերով՝ Նա իր սիրո լեզունդն էր հյուսում:

Նա իմ անունով ծառ ուներ, որը ամեն տարի առատորեն բերք էր տալիս:

«Դու էլ պիտի ինձ համար ծաղկես ու այս չքնաղ ծիրանենու պես համով, հասուն պտուղներ տաս, սկզբի համար երկու տղա եմ ուզում, երկու աղջիկ» այս խոսքերը հաճախ էր կրկնում, չմոռացավ հիշեցնել նաև այդ օրը: -Իմ տղաները պիտի ծառայեն և մեր երկրին արժանի զինվորներ լինեն, աղջիկներս պիտի հարսնանան ու շատ-շատ զավակներ ծնեն, գիտես, մեր ժողովուրդը պիտի առնվազն չորս երեխա ունենա, որ մեր ծնելիության մակարդակը գոնե մի փոքր աճ գրանցի,-հայրենիքը նրա տարերքն էր, ինքն էլ՝ այդ երկրի անձնուրաց զինվորը:

Նա արդեն որքան ժամանակ էր ամուր բռնել էր ձեռքս և մյուսով գրկել իրանս, գլուխը դրել էր ուսերիս և միաժամանակ այնպես փոքր ու մեծ էր նա: Նայում էի կյանքալի ու հայրենաջիղ աչքերին և հոգիս ծիածանվում էր, մի՞թե Աստված դարձյալ ինձ արժանի է համարում կանգնեցնել այն մարդու

կողքին ում միայն ցավ եմ պատճառում իմ անտարբերությամբ:

Նա ասես մտքերիս թելը գտել էր ու արդեն ասեղվում էր՝ կյանքի սևազգեստ էությունը հետզհետե կարկատելով երջանկության կապտերիզ ու կարմրավառ երանգներով: Բնությունը քնքշորեն ներդաշնակվել էր մեր սրտերի հանկարծահոս սիրահեղեղին, գեփյունն էլ մանրաքայլ ուղեկցում էր մե՛րթ գրկելով, մե՛րթ ապտակելով, գարունը դարձավ մեր հոգու երգը և ծաղկեց ձնծաղիկ սիրուս կոկոնը...

Ես խնդրեցի Արփիին համալսարանում տեղեկացնել, որ հիվանդ եմ և մի քանի օր կբացակայեմ, իսկ իրականում համարձակությունսս դեռևս չէի վերագտել, դեռ Արամի թողած հետքերը չէին սպիացել, դեռևս թարմ էին նրա արկածաբույր համբույրների հիշողությունները: Ես զգվանքով էի հավում մարմնիս, դեռ զգում էի Արամի կեղտոտ ձեռքերի շոշափյունը, թեև ես կարողացա պահպանել աղջկական անաղարտությունս, բայց փոխարենը անդարձ փշրվեց երազներիս զարդատուփը:

Արամը ասես լինե՞ր երազանքներիս հրաշք փայտիկը, որ մի հարվածով ուզում էի ամեն ինչ ունենալ, փոխարենը ունեցա փշրված հուսահատություն, տրորված արժանապատվություն և այլևս չերազելու ցանկություն...

Նա...նա դարձավ իմ փնտրած երջանկությունը և երազավառեց մոխրակույտի վերածված ներաշխարհս, նա հարստացրեց հոգուս աղքատությունը և ամբարեց աշխարհս իրական արժեքների գնահատման արվեստով... Ես ճանաչեցի սերը բաց աչքերով, ես սիրեցի սերը և ինձ սիրեցի նրա սիրով...

Ես սիրահարվե՛լ էի...

Նա ասես այն ուշացած արևն էր, որ պիտի գար ու ջերմացներ ձմռան ցրտից դալկացած ծառ ու ծաղկի արմատները: Նրա կողքին ցուրտն այլևս սարսափելի չէր, անձրևը հաճելի էր, սառույցը՝ հալեցված...

Հաջորդ օրն էլ հանդիպեցինք, այս անգամ՝ իրենց այգում, ուր այնքան հիշողություններ կային..

Նախկին քմահաճ աղջկանից էլ բան չէր մնացել, նա կարծես թե զգալով աչքերիս փայլը և հոգումս խաղացող թիթեռների խաղը՝ անխոս համբուրեց պարանոցս, ես աչքերս կկոցեցի՝ արև տեսած ծաղկի նման: Նա իր փափուկ ձեռքերով շոյեց մարմինս և զգուշորեն արձակելով վարսերիս մազակալը՝ մատները սահեցրեց մարմինս ողջ երկայնքով, ես ընկմվեցի նրա հրդեհվող ափերում և կորցրի նավարկելուս հմտությունները. ես հանձնվեցի սիրո տարեքին և փոխադարձ քնքշանքներով ու կենսաթույր համբույրներով հաստատեցի նրանը լինելու իմ ցանկությունը:

Նորաբողբոջ ծիրանենին հսկում էր մեր անդորրը, պաշտպանում և պատնեշում կողմնակի հայացքների դիտումից: Ինչպես շաքարավազն է հալվում տաք թեյի ջերմությունից, այնպես էլ մարմինս հնազանդվեց նրա մարմնի սիրաբորբ փոթորկումներին և քաղցրացավ կարոտականչ համբույրների խենթությունից: Նա գրկեց ինձ հոգատար ու սիրալիր գորովանքով և շշնջաց.

- Դու միշտ իմը կլինես, քանի դեռ բերանումս շունչ կա:

Ես գիտեի, որ իմ թուլությունը մեր նորածիլ սիրո գրավականն է դառնալու և վայրկյան անգամ չէի զղջում. ես վստահում էի նրան: Նա Արամը չէր, նա ինձ չէր սիրում օգտագործելու նպատակով, նա իմ ներկայությամբ թևավորվում էր, իմ խոսքերից՝ ոգևորվում, ես այժմ հասկանում եմ, որ սերը հենց այդ է, որ կա. սերը վստահությունն է ու նվիրումը, սերը հիացմունքն է ու դողածին հպումը:

Նրա աչքերը վառվում էին կրակագույն բոցերով, նույն հրդեհն էլ իմ հոգում էր:

-Այս ի՞նչ արեցի,-խոսեցի լացակումած, գլուխս դնելով մերկ ուսին,-հիմա ինչպե՞ս տուն գնամ,- Անճրևից փախա և մնացի կարկուտի տակ:

-Մի՛ մտահոգվիր, ես հետդ ձեր տուն կգամ, ես քեզ այսուհետ ոչ մի վայրկյան մենակ չեմ թողնի,- նրա խոսքերից վստահություն էր ծորում, նա այլևս այն դպրոցահասակ խեղճ ու կրակ պատանին չէր.

իմ առջև պատասխանատու և հասուն տղա էր կանգնած:

Նա իր խոսքի տերը եղավ և ծնողներիս հայտնեց, որ ինձ հետ կապված շատ լուրջ մտադրություններ ունի և այժմ խնդրում է ձեռքս:

Ծնողներս շոկի մեջ էին, դեռ ժամեր առաջ ես նրան սովորական դասընկերներիցս չէի տարբերում, իսկ հիմա ձեռքս ձեռքիցը բաց չեմ թողնում:

-Մենք սիրում ենք իրար և վստահ ենք միմյանց ընտրության հարցում,-խոսեցի հստակ ու վճռական՝ հայացքս անորոշ կետի հառելով. չէի համարձակվում նայել ծնողներիս աչքերին:

Հայրս թեև արդար քրտինքով ապրող, ընչազուրկ գյուղացի էր, բայց իր խոսքի ու գործի տեր մարդ էր, համալսարան չէր ավարտել, բայց շատ լավ գիտեր ուսման ու կրթության արժեքը, լուրջ-լուրջ դասախոսություններ չէր լսել, բայց կարողացել էր ճիշտ մարդ դաստիարակել, սակայն այդ օրը գիտակցեց, որ աղջիկը չարաշահել է իր վստահությունը: Իմ անորոշ ու անսովոր շարժումները, հայացքներիս հանկարծակի փոփոխությունը հուշեց ծնողներիս, որ այժմ արդեն ուշ է բարոյախրատական ճառերի արժարժման համար:

Մայրս, այդ շատախոս ու անշահ կինը, առաջին անգամ հորս հավասար չխոսեց, չասեց նույնիսկ մեկ բառ, բայց հայացքը առավել քան խոսուն էր: Ես գիտակցում էի, որ իմ թուլության հետևանքները,

գուլցե, լինեն երկուսիս համար էլ ճակատագրական, բայց այժմ ցանկանում էի հեռու վանել նման մտքերը: Ինձ զարմացրեց այն փաստը, որ ծնողներս առանց իմ խոստովանության էլ հասկացան, թե ինչ էր կատարվել մեզ հետ, դա ծնողական բնագոյ էր, թե՞ աչքերս էին մատնել ու դողացող մարմինս:

Հայացքս սահեցրի մարմինս վրայով և հանկարծ հայտնաբերեցի, որ շտապելուց բլուզս թարս եմ հագել: Ահա թե ինչու ամեն բան նախատեսվածից ավելի արագ և անվեճ ընթացավ, մինչդեռ հոգիս տակնուվրա էր եղել, ես անդարձ ճմրթեցի ծնողներիս վստահությունը, նաև չարդարացրի այն երանավետ սպասելիքները, որ կապում էին ինձ հետ:

-Բայց նման բան անելու հըմա, դեռ շատ երեխա՞ չեք,-չարունակեց հայրս ընդատված զրույցը, երբ մենք արդեն բոլորել էինք սեղանի շուրջ:

-Ես գիտակցաբար եմ կատարել իմ ամեն քայլը, մենք կնշանվենք և երբ բանակից գամ կամուսնանանք, ես առաջին օրը չի, որ ճանաչում եմ ձեր աղջկան, դուք էլ ինձ ու իմ ընտանիքին լավ գիտեք, ես տեր եմ իմ ամեն խոսքին,-խոսեց իմ ապագա նշանածը, մտովի գծելով մեր հետագա, համատեղ կյանքի քարտեզը, մինչդեռ ինքս լսում էի նրանց այլայլված ու շփոթահար:

Երբեմն թվում էր, որ սա երագ է, որ ես դեռ Վանաձորի մեր տանն եմ և Արփին շուտով կարթնացնի ինձ առավոտյան քաղցր քնից և

կշտապեցնի համալսարան:
Ես կյանքի լուրջ ու հասուն քայլ էի կատարել,
մինչդեռ այնպիսի տպավորություն էր՝ կարծես
հերթական պատմվածքիս սյուժեն եմ շարադրում և
կրկին այնպես եմ մտել կերպարի մեջ, որ ամեն
գրածս տողը զգում եմ մարմնիս ողջ ծավալով ու
ծանրությամբ...

Այդ և հաջորդ գիշերները աչքերիս խաղաղ քուն
չբերեցին, երբ անցավ իրադարձությունների տաք
գոլորշին՝ կարծես նոր միայն կարողացա տեսնել
հատակը: Նա մեկ ամիս անց պետք է անցներ
պարտադիր զինվորական ծառայություն, թեև
երկողմանի ծնողազուրկ էր, կարող էր հեշտ ու
հանգիստ ազատվել, բայց նա դրա մասին լսել
անգամ չէր ուզում:

-Ինձ համար շատ դժվար է քեզ մենակ թողնել և
գնալ, բայց հայրենիքի պարտքը հոգումդ չես կարող
խաղաղ ապրել, ինձ ողջ կյանքում կուղեկցի
անլիարժեքության և թուլամորթության զգացումը:
Եթե ես պարտքս չկատարեմ արժանի չեմ լինի ո՛չ
հորս որդին կոչվելու. ո՛չ էլ ինքս հայրանալու
պատվին:

Ես առավոտյան վերադարձա Վանաձոր. Արփին
տանը չէր, բարեբախտաբար մեր տանտիրոջ հիմար
թռռը ևս իր այցով անակնկալ չէր մատուցել,
օգտվելով մենակ լինելու բացառիկ
հնարավորությունից՝ արագ հավաքեցի իրերս և

բարձրացա երկրորդ հարկ, որտեղ ապրում էին մեր տան իրական տերերը:

-Ես գնում եմ հորաքրոջս տանն ապրեմ, նա ապրում է Սպիտակում, դա ծնողներիս որշումն էր, անչափ շնորհակալ եմ Ձեզ ամեն ինչի համար,. այս մի քանի ամիսների ընթացքում դուք մայրաբար վերաբերվեցիք ինձ և ընկերուհուս:

Չէի սիրում հրաժեշտի երկար ու սրտաճմլիկ խոսքեր շռայլելը, բայց սա այդ դեպքերից էր. ես շատ էի կապվել մեր սենյակին և մեր հարևաններին, ասես երկրորդ անգամ էի լքում հայրական տունս:

-Իսկ Արփիհ՞ն,-գլուխս շոյելուց և ճակատս համբուրելու հետո հարցրեց Արամի տատը,-նա՞ էլ է ապրելու հորաքրոջդ տանը:

-Ո՛չ, միայն ես եմ տեղափոխվում, Արփին գիտի իմ որոշման մասին, մեր կուրսընկերուհիներից մեկը, որը մեր հարևան Շնող գյուղից է, այսօր կտեղափոխվի և միասին կապրեն ձեր տանը,- բացատրեցի ես:

-Կկարոտենք քեզ, իմ լավ աղջիկ, ես քեզ շատ սիրեցի,-ափսոսանքով շշնջաց գրուցակիցս, որի հոգատարությունը մեր նկատմամբ անեզր էր, նվիրումը՝ անմնացորդ:

-Ես երբեմն-երբեմն կայցելեմ Ձեզ,-խոստացա, թեև գիտեի, որ դա իմ վերջին այցելությունն է այդ տուն. պետք էր հնարավորինս հեռու մնալ Արամից և հետքերս դարձնել անտեսանելի, չնայած չէի կարծում, որ ինձ կփնտրի:

Երբ արդեն պատրաստվում էի դուրս գալ՝ դարպասների արանքից երևած Արփիի փայլուն, ոսկեծամ գլուխը.

-Ընկերուհի՛ս,-փաթաթվեց ինձ և ամուր-ամուր գրկեց,-ես կխոսեմ ծնողներիդ հետ, կհասկանան քեզ, չե՛մ ուզում գնաս:

-Ի՞նչ որ բան է պատահել, որ ես տեղյակ չեմ,-աստիճանների վրայից ասաց Ալվարդ տատը և աչքերը փայլեցին խուճապահար: Նա տեղյակ չէր, որ թոռն ու ես գնացել էինք Երևան և առհասարակ այդ մասին տեղյակ չէր ոչ ոք, նույնիսկ՝ Արփին: Այդ էր պատճառը, որ կարողացա Արփիին ևս համոզել, որ ծնողներս իմանալով Արամի հաճախակի և անսպասելի այցելությունների մասին անհանգստացել էին և առաջ քաշել հորաքրոջս տանը ապրելու իրենց վաղեմի երազանքը, մի բան, որն ամենևին իմ սրտով չէր, բայց ես այն կացության մեջ չէի, որ կարողանայի համառելի, իմ ցանկությունները ներկայացնելի: Այս ամենը ծնողներիս ներկայացրել էի այլ գույներով, պատմել էի, որ Արփիին ծնողները միշտ շատ գումար են ուղարկում, լավ են պահում և ես որևէ կերպ չեմ կարողանում հարմարվել մեր ֆինանսական անհամատեղելիությանը:

Այս իրականությունից դուրս պատմությունս զգացի, թե ինչպես է ցավեցնում ծնողներիս, բայց այլևս որևէ բան փոխել չէի կարող, որքան էլ տանջում էր մեղքի զգացումը: Ես ստաշեն ամրոց էի

ստեղծել և թագավորում էի, մինչդեռ ամբողջ օրը տառապում էի հետագա քայլերս ճիշտ հունով կառուցելու տենչագին ցանկությամբ, բայց սխալը կրկնում էի սխալի հետևից, մի սուտս արդարացնելու համար ստիպված էի լինում մեկ այլ ավելի մեծ սուտ հորինել: Խճճվել էի իմ իսկ ստեղծած սարդոստայնում, որը կողմը նայում էի անլուծելի թվացող խնդիրներ էին:

Հորաքույրս, որ միջին տարիքի, կարճահասակ և թխադեմ կին էր, ինձ առանձնահատուկ սիրով էր սիրում, երևի պատճառն այն էր, որ թե՛ բնավորությամբ, թե՛ արտաքինով զգալի նմանություններ ունեինք. «Էդ ձեր համալսարաններում հարուստ, համեստ տղերք չկա՞ն, մեկի հետ շփվի, կյանքդ կապի, հնարավորությունը մեկ անգամ ա գալիս, հետո կփոշմանես, ես էլ էնքան դես-դեն գցեցի վերջը մենակ մնացի սաղին պոզ ու պոչ կպցնելով»: Նմանատիպ խոսակցությունները կրկնվում էին օրը մի քանի անգամ:

Մեկ ամիսն այնպես արագ անցավ, որ դեռ թվում էր, թե երեկ եմ վերադարձել գյուղից, բայց արդեն իսկ վաղը նորից գյուղ էի գնալու՝ երկու օրից իմ ու նրա նշանդրեքն էր, որից հետո պետք է բանակ գնար: Մենք որոշեցինք երկու իրադարձությունները համատեղել...

Առավոտյան բավականին վատ էր ինքնազգացողությունս, գլխապտույտ ունեի, որին սակայն առանձնապես ուշադրություն չդարձրի, այն համարելով վերջին շրջանում եղած սթրեսների և գերհոգնածության արդյունք...

«Երեսուն րոպե էլ քնեմ և արդեն թարմ ուժերով կարթնանամ» խոստացա ինքս ինձ, բայց արթնանալով կրկին ծանրության նույն ճնշող զգացումն էր. նրա զանգը սթափեցրեց և արևեց մռայլությունս.

-Ե՞րբ պատրաստ կլինես, ես արդեն հորաքրոջդ շենքի մոտ եմ:

Վաղուց էր նրա ձայնը այդպես զրնգուն ու աշխույժ չէր հնչել, չափազանց հաճելի էր գիտակցել, որ գոնե ինքս դեռ կարողանում եմ իմ անհրապույր կյանքի գորշ ելևէջներով գունավորել սիրելիս կյանքը...

Նա ինձ սպասում էր սպիտակ վարդերի հսկայական փունջը ձեռքին, մեղմիկ քամին տարուբերում էր վարսերս, որոնք այնքա՛ն նման էին հուզախառը մտքերիս...

-Շնորհակա՛լ եմ, որ կաս,-ինձ մոտենալով քնքշորեն գրկեց և ծածկեց դեմքս վարդաբույր համբույրներով:

-Ես կարծում եմ, որ մենք շտապել ենք,-ձայնս դողում էր, կոպերիցս կախվել էր արցունքի երկկաթիլ:

-Ի՞նչ ես խոսում,-բռնեց ձեռքս և դրեց կրծքին,-
զգու՞մ ես՝ ինչպե՛ս է տրոփում, զգու՞մ ես, որ առանց
քեզ կանգ կառնի, չե՛մ կարող հաշտվել քեզ
կորցնելու մտքին, դու պետք ես ինձ օր ու ջրի պես ու
դեռ շատ ավելին...

-Ես դեռ փոքր եմ, դեռ ուսումնս կիսատ է, դու էլ
երկու տարով պիտի գնաս, իսկ ես, ես ինչ պիտի
անեմ,-տագնապալից ապրումներս հասել էին
կոկորդիս, բավական էր աչքերս թարթելի և դեմքս
կհեղեղվեր արցունքակաթ ցլոքերով,-մի՛ գնա...

-Մենք ուշանում ենք, բոլորը մեզ են սպասում, ես
իմ խոսքի տերն եմ և շատ լավ եմ գիտակցում ինչ
անեմ,-նա գրեթե, հրելով ինձ խցկեց մեքենան և երբ
արդեն մեքենայի մեջ էինք՝ մինչև գյուղ հասնելը ոչ
մի վայրկյան գրկիցը բաց չթողեց ու անվերջ կրկնում
էր,-ես կմեռնեմ առանց քեզ, առանց քո բույրի,
առանց քո կամակորոթյունների...

Մեր նշանդրեքը անցավ առանց ավելորդ
ծնականությունների. հայրս, գրեթե, լուռ էր, մայրս
արցունքաթաց աչքերը չէր կարողանում թաքցնել,
իսկ՝ ես կանգնել էի նրա կողքին և երջանիկ էի, թեև
գիտեի, որ երկու օր անց մեկ էլ նրան հանդիպելու եմ
երկու տարի հետո:

-Դու մեր որդին ես,-ասաց հայրս համբուրելով
ծնողական ջերմությունից վաղաժամ գրկված
երիտասարդին,-ծնողներդ նայում են քեզ, պատվով
ծառայի՛ր, քեզ բոլորս ենք սպասում:

Նրան բանակ ճանապարհելու առավոտը ամենատխուրն էր, ամենաթացը: Ամբողջ գյուղն էր հավաքվել. ասես ամեն մեկը նույն վայրկյանին դարձավ և՛ հայր, և՛ մայր, նրան բոլորն էին սիրում, միտեսակ գյուղի երեխան էր դարձել՝ բոլորի ուշադրության ու հոգատարության կենտրոնում էր: Վերջին անգամ համբուրեց ինձ և խնդրեց խոստանամ, որ ինչ էլ լինի հավատարիմ կմնամ մեր սիրուն: Հրաժեշտից առաջ մի փոքրիկ, փայտյա խաչ նվիրեց.

-Եթե էլ չվերադառնամ, այրի ձեռքերիդ մեջ, թող խաչով լինի սիրուս վերջին կայծի մարումը:

-Ի՞նչ ես խոսում, ես այն հենց քեզ եմ տալու, սիրում եմ քեզ...

Ես, գրեթե վստահ էի, որ որպես երկողմանի ծնողագուրկ, նրան կթողնեն Հայաստանում, բայց նա ինքն էր խնդրել, որ իրեն տանեն Ղարաբաղ՝ Թալիշ, որտեղ ժամանակին կռվել էր նաև հայրը:

Ես այս օրերի քառասային շրջանում բավականաչափ աչքաթող էի արել դասերս և անունս հայտնվել էր համալսարանից հեռացվող ուսանողների

ցուցակում:

Ստիպված էի օրնիբուն պարապել և հանձնել տարբերությունները,

սակայն

ինքնազգացողությունս գնալով վատանում էր:

Առավոտները դժվարությամբ էի կարողանում աչքերս բացել, անընդհատ քնկոտության ծանր

զգացումը կախվում էր կոպերիցս, չգիտեի և չէի հասկանում, թե հետս ինչ է կատարվում:

Հորաքրոջս հորդորներից հոգևած՝ մի օր դասերից հետո գնացի բժշկի:

Բժիշկը, որ կլինեի մոտ քառասուն տարեկան՝ բավականին բարեհամբույր և բանիմաց կին էր, աչքերը ծով վստահություն էի ներշնչում և հայացքում անթեղված էր ծնողական անծայր հոգատարություն:

-Անհանգստանալու կարիք չկա, ձեզ մոտ 4-5 շաբաթական հղիություն է,-ժպտադեմ հայտնեց բժշկուհին,-ձեզ շնորհ..., խեղճ կինը խոսքը չկարողացավ շարունակել՝ իմ անսպասելի արձակած ճիչը նրան շոկի ենթարկեց: «Ես հղի եմ» այս երկու բառերը մեխի պես խրվել էին սրտումս և ծակծկում էին մինչև վերջին կաթիլ արյունս քամելու վճռական մտադրությամբ: Ոտքերս ծանրացել էին, չէի կարողանում քայլել, գլխումս հազար ու մի մտքեր էին պտտվում՝ թուլամորթ եղբյամբ ու թունավոր մտադրությամբ:

Ես միշտ կարծել եմ, որ ուժեղ և համառ աղջիկ եմ, կարող եմ և պարտավոր եմ հաղթահարել իմ առջև ծանրացած խնդիրները, բայց սա այդ աղջիկը չէր: Ինչպե՞ս կընդունեին ծնողներս իմ այս նոր կարգավիճակը, իսկ նա՞... ինչպե՞ս կընդունի հայրանալու բերկրանքը, երբ դեռ ինքն է երեխա: Իմ կյանքն այլևս ինձ չի պատկանում, իմ միջոցով մի նոր եակ է լույս աշխարհ գալու, ես իրավունք չունեմ

Աստծո որոշումը խաղարկելու, պետք է ուժ գտնել և շարունակել ապրել նոր էջից սկսելով...

Բայց այս փորձիկը, որ պիտի լույս աշխարհ գա՝ ամենևին հարմար պահ չի ընտրել, նա իմ սպասված անսպասելին է, որը սակայն վաղաժամ այցելեց: Քայլերս ուղղեցի դեպի մեր հին ապրելատեղին. Արփին տանն էր: Պատմեցի նրան ինձ սպասվելիք նոր կարգավիճակի մասին, բայց վերջինս միայն հուսադրեց, առանց որևէ ելք նշմարելու:

Ես բավականաչափ ուժ չունեի երեխայիս կյանքը ավարտելու, նա իմ ու նրա սիրո ծնունդն է, ես ընդամենը այն աշխարհն այս աշխարհին կամրջող միջոց եմ: Հենց հաջորդ օրն էլ մեկնեցի գյուղ, ծնողներս շոկի մեջ էին, երբ ավարտվեցին մեղադրական խոսքերը, ես բնորոշվեցի՝ անամոթ, անպատասխանատու, երախտամոռ...

Մայրս բարձացնելով գլուխս և տեսնելով արցունքածով, կարմածուփ դեմքս մի այնպիսի խորը հոգոց հանեց, որ տան բարակ պատերը դրդացին, դրան հետևեց հորս գոռոցը և հայոյանքները ուղղված նախ մորս, ապա և ինձ...

-Դուք իմ պատճառով էլ չեք ամաչի, ես կհեռանամ տնից,-արտաբերածս ամեն տառը փշի պես խրվեց կոկորդիս:

-Ոչ մի տեղ էլ չես գնա, այս խայտառակությունից ինչ-որ կերպ պետք է դուրս գանք,-հորս և իմ մեջտեղում կանգնած ասաց մայրս,

պատրաստ առաջինը իր վրա վերցնել հորս ապտակատուր հարվածները:

-Այս ինչ ես դաստիարակել, ես էսպիսի աղջիկ չունեմ,-հայրս դուրս եկավ սենյակից և ոտքով այնպես հարվածեց սեղանին, որ ձեռքիցս վայր ընկավ ջրի բաժակը՝ բաժանվելով մեծ ու փոքր կտորների: Ես էլ ծնողներիս ձեռքերով կերտված բաժակն էի, բայց ավա՛րդ ես էլ նրանց վստահությունը կոտրեցի որևէ պիտանի կտոր չթողնելով:

Շուտով մեր ընտանիքով այցելեցինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ նրա երդման հանդիսավոր արարողությունն էր:

Առաջին անգամ էի լինում Արցախի դրախտավայրում, ցավալի էր գիտակցել, որ մեր գեղեցկուհու կյանքը վտանգված է և գլխին կախված է թշնամու ահաբեկիչ սուրը: Արցախը նմանվեց այն գերված արքայադստերը, որին չար վիուկը կախարդել էր և զրկել արևի կենարար լույսից: Կանաչոտ ու կարկաչահոս բնության թագավորի ապարանքը, ասես, հենց այստեղից է ծնունդ առնում:

Չինվորների երդման հանդիսավոր արարողությունը հիանալի էր կազմակերպված. մեծ պատիվ ու պատասխանատվություն զգացի նայելով նրանց միանման դեմքերին ու հաղթանակածին ժպիտներին: Նրանք դեռ նոր-նոր են կյանք մտնում, բայց իրենց փխրուն ուսերին է դրված մի ամբողջ

Ժողովրդի կյանքը պաշտպանելու կոչումը: Հիմա եմ գիտակցում նրա հայրենասիրական ոգու ողջ եռությունը և մեղքի ծանր ճնշում եմ գգում, երբ նրան ինդրում էի չծառայել, չէ՞ որ այս տղաներից յուրաքանչյուրն էլ ունի սպասող... Մեր հանդիպումը կարճ տևեց և երբ հայտնեցի նրան, որ հայր է դառնալու՝ հայացքը փայլեց այնպիսի հզոր լույսով, որ ինքս կկոցեցի աչքերս: Նա փարվեց ինձ մորը նոր գտած որբի ոգևորությամբ և դեմքս պարուրեց անթիվ-անհամար սրտաբուլի համբույրներով...

-Իմ սեր, իմ հավատ և ուժ, ես հիմա առավել քան անվախ եմ, վստահ, որ ինձ սպասողներից մեկն էլ որդիս է...

Այդ տարվա գարունն ուշանում էր... Երկնքի աչքը միշտ թաց էր, չկար թարմության ու ջերմության որևէ գարնանահունչ թակոց. ասես ձմեռ դեռ չէր ուզում գենքերը վայր դնել, միայն տեղ-տեղ կարող էիր որսալ բռաչափ կանաչ՝ այն էլ ծածկված եղյամե թափանցիկ վերմակով: Մերկացած ծառերից կախված անձրևի կաթիլները՝ վերջիններիս նմանեցրել էր անպարզ և մաքուր մարմնավաճառների, որ այդքա՛ն կարոտ էին արևի կրքոտ համբույրներին ու տաք քամիների գրկախառնությանը...

Արդեն մեկ ամիս էր ինչ ծնողներս տեղափոխվել էին Վանաձոր:

Հորս համար այս տեղափոխությունը նույնքան ցավոտ էր, որքան ոտքը նոր կտրած հաշմանդամի վիճակը, շարունակ պտտվում էր մեր նոր վարձակալած բնակարանում ու այնպիսի հոգոց էր արձակում, որ ամբողջ մարմնով սարսռում էի և մեղավոր ու գլխահակ հայացքս աշխատում վայրկյան առաջ տեսադաշտից թաքցնել: Հայրս, այդ հաղթանդամ ու հաստակող մարդը, որի կերպարում ասես Սասնա տոհմի ողջ առասպելական ուժն ու կորովն էր անթեղված, այս մի քանի ամիսների ընթացքում վերածվեց թույլ և ուժասպառ, ապրելը՝ գոյությունը քարշ տալուն հավասարեցրած մարմնագունդի:

Նույնիսկ երիտասարդ ծնողների մահը հորս այդպես չտապալեց, ինչպես իմ նոր, վաղահաս կարգավիճակի փոփոխությունը: Ես ժամանակին հորս հպարտությունն էի, իսկ հիմա՝ խորտակված երազների քայլող պարտությունը... Մայրս, մայրս բարակել էր, մի տեսակ օտարացել էինք, աչքերը փոս էին ընկել՝ տեսանելի դարձնելով երիտասարդությունը ջնջող կնճիռները, աչքերի փայլն էլ մոխրագունել էր...

Մեր չորսից միայն քույրս էր երջանիկ. ես դեռ վաղ տարիքից էի նրան վարակել իմ քաղաքատենչության վտանգավոր հիվանդությամբ:

-Ես մեծ քաղաքում դպրոց կգնամ, շատ սիրուն շորիկներ ու մեծ դպրոցական պայուսակ կունենամ,-

շարունակ կրկնում էր քույրս՝ շուռումուռ գալով հայելու առաջ ու մազերը աջ ու ձախ թեքելով:

Ես էլ իր փոխարեն նույնքան խանդավառությամբ կսպասեի մոտալուստ սեպտեմբերին, եթե միայն իմանայի, որ կրկին կդառնամ վեց տարեկան և այսպես մեղավոր չեի լինի այսքան թանկ ու սիրելի մարդկանց առաջ: Մի պահ երազանքների թևերին ճախրած ես էլ երևակայեցի, որ մի գեղեցիկ օր էլ՝ ես իմ երեխային դպրոց կուղարկեմ, մինչդեռ հիշողությանս մեջ դեռ թարմ էին իմ դպրոցական տարիները: Մայրությունը իրական բերկրանք է, բայց սիրելի՛ ընթերցողներ, ձեզ պետք է խնդրեմ, որ չչտապեք, անպայման կրթություն ստացեք, ինքներդ կյանքի սևն ու սպիտակը, սխալն ու շիտակը որոշել կարողացեք, նոր կատարե՛ք ձեր առաքելությունը: Գեղեցիկ և եթերային կյանքը միայն հեքիաթներում է լինում. կյանքի իրական պատմությունը խորը դրամա է, երբեմն ողբերգական ավարտով:

Նա, գրեթե ամեն օր զանգում էր, խոսում էինք տարատեսակ թեմաներից՝ մեր ապագայից, երկրի ներկայիս ծանր կացությունից, երիտասարդ և անփորձ ընտանիքների կազմավորման հարահուսն դժվարություններից...

«Միշտ կողքիդ եմ լինելու, դժվարը սկիզբն էր, քիչ մնաց, դիմացի՛ր» միշտ այսպիսի խոսքերով էր ավարտում մեր խոսակցությունը, հավաստիացնելով, որ իր հետ ամեն ինչ կարգին է,

այնպիսի ոգևորությամբ էր պատմում բանակի մասին, որ ինձ մոտ ևս ծառայելու փափագ էր արմատավորում:

«Որակածին ուսուցիչ եղի՛ր, ոգեկից գրող, սիրող կին և սիրասուն մայր. դա կլինի քո ամենամեծ ծառայությունն ազգիդ» այս խոսքերից հետո բազմախոր լռություն էր տիրում, որը ոչ մի բառով պետք էր ընդհատել... Որքա՛ն խորագետ է բնությունը, այն ինն երկար ու ձիգ ամիսների ընթացք է տալիս նորաթուխ մորը, որպեսզի ժամանակ ունենա իր առաքելության մասին մտորելու, դեռ չծնված զավակին զգալու...

Վերադառնում էի բժշկի հետ ունեցած հերթական հանդիպումից, երբ հանկարծ մեր շքամուկտքում բուլբուլիկն պատահաբար հանդիպեցի Արամին:

-Արփին ասեց, որ նշանվել ես, ինչպես տեսնում եմ ժամանակդ զուր չես վատնել, այդ ու՞մ վզին ես փաթաթվել,-ասաց նա ձեռքս բռնելու անհաջող փորձից շառագունած:

-Դու վաղուց չկաս իմ կյանքում, թո՛ղ անցնեմ,- ջանում էի առաջ քայլել, բայց փարթամ մարմնով փակեց ճանապարհս:

-Ուր ես գնում, սպասի՛ր, սպասի՛ր, քեզ մի առաջարկ ունեմ, որը երկուսիս շահերից է բխում,- ցինիկ ծիծաղը, որը հնչում էր անմիջապես ականջիս տակ՝ գորտի կռկռոցի տպավորություն թողեց:

-Դու ո՛վ ես, որ պիտի լսեմ քեզ,-վախից դողում էի և ձեռքերով գրկել էի արդեն կլորիկացած փորիկս, առաջին անգամ զգացի, որ միաժամանակ պետք է պաշտպանեմ երկուսիս:

-Եթե շարունակես ինձ հետ հանդիպել, ապա ոչ մեկ չի իմանա մեր գաղտնի սիրավեպի մասին, իսկ, եթե դեմ ես՝ խնդիր չկա, բոլորին, այդ թվում և ծնողներիդ կպատմեմ, որ եղ երեխայի հայրը ես եմ, մինչև դու կփորձես հերքել, ես ցույց կտամ ապացույցը:

Արամի համարձակ ու հեգնախառը հայացքը, ծխախոտաբույր շուրթերն ու զզվելի ծիծաղն այժմ էլ աչքերիս առաջ են: Հաղթական բառաչանքի հետ մեկտեղ, նա ձեռքերում շուռումուռ էր տալիս իմ ոսկե ականջօղը, օրը մոռացել էի այն չարաբաստիկ, անիծված հյուրանոցում:

-Քո՛նը չի, կարող ա իմն ա, վա՛յ քո՛նը չի, քո՛նը չի...-անդադար կրկնում էր ևա և ամեն մի «քոնը չի» ասելն ասես հազարավոր հարվածներ էր հասցնում դալկացած մարմնիս:

Ես նորից համտեսեցի խորտակված հույսերիս ու երբեմնի գարշահոտ օրերիս լարծուն մաղձը, դարձյալ հիշեցի երազախաբ, հեքիաթահավատ աղջնակին, որը մի քանի ամիսների ընթացքում կտրուկ հասունացել էր ու հարսնացել...

-Քո ինչի՞ն է պետք իմ ներկայությունը, առանց այն էլ կյանքդ ինքնին թագավորավայել շքեղություն է,-արցունքները հոսում էին ներսից, բայց ինձ

փորձում էի հնարավորինս հավասարակշռված պահել, ինչը ոչ միշտ էր հաջողվում:

-Ես չկարողացա մոռանալ քեզ, դու ինձ համար չդարձար հերթական ճմրթած էջ, դու...

-Լռի՛ր, հիմա՛ր, դու ինքդ էլ չգիտես, թե ի՞նչ անդամնալի հետևանքներ ես թողել իմ ներաշխարհում,-չթողեցի խոսքը շարունակի:

-Ես սիրահարվել եմ քեզ և թեկուզ այդ կարգավիճակով ուզում եմ քեզ հետ մի քանի հանդիպում ունենալ ու վերջ, խոստանում եմ էլ չե՛մ գա, չե՛մ անհագստացնի,-Արամը այս անգամ այնպես հանգիստ էր խոսում, որ մի պահ թվաց նախորդ րոպեները մեզանից շատ հեռու գտնվող մղձավանջային երազ էր,-գիտեմ, որ երեխայիդ հայրը զինվոր է, այնպես որ քեզ ոչինչ չի կարող խանգարել, եթե քեզ այդ վիճակում մենակ է թողել, ապա քո դավաճանությունը առավել քան հիմնավորված է...

-Ապու՛շ, անուղե՛ր, ինչի՛ց ես տեղյակ, դու՛ ի՞նչ գիտես զինվոր լինելը ինչ է, ձեզ նմաների համար զինվոր լինելը հերթական փողով լուծվող հարցերից է, նա և իր նման մյուս տղաներն են, որ օր ու գիշեր հսկում են մեր անվտանգությունը, մինչ դուք՝ նրանց հասակակիցներդ, անհագուրդ խրախճանքների մեջ եք:

-Լա՛վ, լա՛վ, եդ դասախոսությունները պահիր մարդուդ համար կկարդաս, ես մի երեք օրից էլի կգամ մինչև այդ մտածի՛ր առաջարկիս մասին, թե չէ

ես իմ խոսքի տերը կլինեմ, իսկ քո էդ չեղած բարոյական կերպարն ու հայրենասիրական նվիրումները կհավասարեցնեմ հողին...

-2զվում եմ քեզնից, անիծվեր այն օրը, որ հանդիպեցի քեզ,-բղավեցի նրա հետևից, բայց հավանաբար չլսեց, քանի որ անհետացավ նույնքան աննկատ, ինչպես որ հայտնվել էր: Նստեցի շքամուտքի սառը աստիճանին և ձեռքերս տաքացրի հոսող արցունքներիս հեղեղով, մինչդեռ ո՛չ արտասվելով կարող էի փոխել ստեղծված անելանելի դրությունը, ո՛չ էլ սպասումներով կարող էի սխալներս կոծկել... Սրտումս ուժեղ ծակոցներ զգացի, ցավը այնքան սոսկալի էր, որ կծկվեցի ամբողջ մարմնով և զգացի արցունքներից սառած դեմքս ինչպես է անորոշ հայացքը հառել անդին...

Ի՛նչ էր ինձ սպասվելու, ինչու՞ է մի քանի օրերի տխուր անդրադարձն ու արկածախնդրությունը այժմ սովերի պես հետևում ինձ, մի՞թե երազախաբությունը չէր լինելու միակ պատիժս:

Մորս հայացքից չվրիպեց իմ այլայլած տրամադրությունը, նրա բազմաթիվ անգամ հնչեցրած նույն հարցը այդպես էլ մնաց անպատասխան: Փակվել էի սենյակումս և դեռ բառ առ բառ հիշում էի Արամի խոսքերը, որոնք կիպ օղակել էին պարանոցս, շղթայել ձեռքերս, բանտել միտքս...

Որոշեցի, որևէ բան գրել, բայց մտքերս քառավել էին, պատեպատ զարևվել, իմ երբեմնի գրուցակիցը՝ թուղթը, այս անգամ դավաճան դուրս եկավ, գրիչը չէր ենթարկվում, բառերը շուրթերիցս դուրս չէին գալիս: Ստեղծագործելու ընթացքը ես միշտ համեմատել եմ աղոթքի հետ, բայց այժմ զրկված լինելով այդ բերկրանքից, փորձեցի պատճառները որոնել ներսումս: Այո՛ ես շատ մեղավոր էի, մեղավոր էի, որ ցանկանում էի ինքնուրույն կերտել լուսաշող ապագա, մինչդեռ շնչեցի այրված հույսերիս դառնաբույր մոխիրը, չէի սիրում նրան, ում սիրո արդյունքը այժմ կրում եմ կրծքիս տակ: Մեղավոր եմ, որ Արամի պատճառած վերքերի համար սպեղանի դարձրի նրան, ով իսկապես ապրում է ինձնով և գունավորում օրերը հանկարժահաս սիրուս ծիածաններով: Նա իմ երեխայի հայրն է, մենք՝ նրա ապրելու փարոսը, ճակատագիրը նրան սահմանեց՝ որպես իմ հեքիաթների հերոս, որն այս անգամ իրական էր, ո՛չ հնարածին:

Ես որոշել էի, որ այլևս տնից դուրս չեմ գալու, պատճառը այն էր, որ վախենում էի կրկին առերեսվեի անցյալիս բքաբեր քամուն:

Օրը երեկոյանում էր և շուրջը փռել էր զովության ու թարմության երկարափեշ շղարշը, որը, մե՛րթ կապտավուն էր, մե՛րթ մանուշակագույն: Դռան զանգը բոլորիս շփոթության ենթարկեց. մուտքի մոտ կանգնած էին՝ Արամը և Արփին: Միայն

կարողացա այն գիտակցել, որ իմ և այդ աներեսի վերջինն հանդիպումից անցել էր ուղիղ յոթ օր: Աչքերս սահեցրի ընկերուհուն ուղղությամբ, բայց ասես բոլորովին այլ մարդ էր կանգնած նրա տեղում՝ շուրթերը կպել էին իրար, երեսի գույնը սպիտակ էր, ձեռքերը դողում էին դողի բոլոր դրսևորումներով:

-Ես եմ ձեր աղջկա երեխայի հայրը,-բարևից հետո խոսեց Արամը, իսկ ես դեռևս քարացած, մղձավանջային երազից արթնացածի շփոթությամբ չգիտեի անգամ, որ կողմ եմ նայում, միայն զգում էի, որ գետինը փախչում է ոտքերիս տակից, իսկ ինքս անքարտեզ օտարական եմ ամայի անդաստանում: Հորս բազմանշանակ լռությունը ապտակեց վերջին փրկության հույսիս, լռությունն այդ տևեց վայրկյաններ, բայց ինձ համար մի ամբողջ հավերժության պատրանք ստեղծեց, բռնելով թևիցս դուրս գցեց ուղիղ Արամի վրա.

-Ես անբարոյական ու ստախոս աղջիկ չունեմ, դու՛րս կորիր, անպատկա՛ռ:

Արամը բռնեց ինձ, բայց կորցնելով հավասարակշռությունս փռվեցի գետնին և գալարվեցի անդիմանալի ցավերի հեղեղում, հայրս շրխկոցով փակեց դուռը մեր երեսին, Արփին արցունքն աչքերին անխոս հեռացավ.

-Ես չգիտեի, որ այսպես կլինի, կներե՛ս ինձ,- Արամը փորձեց գրկել լացից ցնցվող ուսերս, բայց նրա ամեն խոսքը բաց վերքիս վրա ցանած աղի ազդեցություն էր թողնում և ասես բուրձ դանակով

կտրտում էին մարմինս: Վայրկյաններ անց հայրս դողդոյունով բացեց դուռը և հագուստներիցս մի քանի հատ շարտեց ուղիղ դեմքիս, օգտվելով բաց դռան հնարավորությունից՝ Արամը ներս ճողոպրեց և ձայնի բարձր տոնայնությամբ սկսեց.

-Դուք կլսեք ինձ, որովհետև ձեր աղջիկը անմեղ է, այդ ես էի ուզում ամեն կերպ վերադարձնել նրան, բայց դեպքերի այսպիսի զարգացում չէի նախատեսել, մենք միմյանց հետ որևէ կապ չենք ունեցել, հետ ընդունեք ձեր աղջկան, ես էլ ձեզ չեմ անհանգստացնի: Հորս դեմքի գույնը փոխվեց, բայց աչքերը դեռևս ջղայն էին ու մտախոհ.

-Ես չեմ հավատում եղ քո սուտի- մուտի պատմություններին, երեկվա երեխեն չեմ,-հորս այդպես բարկացած ու ոյուրագրգիռ երբեք չէի տեսել:

Մայրս՝ այդ խեղճ ու կրակ կինը, օգտվելով նրանց թեժ խոսակցությունից, մոտեցավ ինձ, որ դեռևս նստած էի շքամուտքի սալիկներին, ապա քնքշաբար գրկելով ներս տարավ, թևքի ծայրերով սրբելով արցունքներս և անվերջ կրկնելով՝ խայտառակվեցի՞նք, խայտառակվեցի՞նք...

-Պա՛յ ջան մեր մեջ ոչինչ չի եղել, խնդրում եմ հավատա ինձ,-ներս մտնելով աղերսեցի հորս արցունքն աչքերիս:

-Քե...քեզ քաղաք էի ուղարկել , որ ու.. ուս...ուս սում ստանաս, մա... մարդ դառնաս, թե՞ որ անվանս ու պատ...պատվիս հետ խաղաս, գյուղից էլ փա...

փա...խանք էլի քո ան...ան... անպատկառու...
թյուններից պրծում չե...չեեե ...չեղավ,-հորս այդպես
բարկացած երբեք չէի տեսել, ձայնը այնպես էր
դողում, որ բառերը քիչ չափով էին հասկանալի
հնչում, յուրաքանչյուր տառը արտաբերում էր մեծ
ջիգ ու ջանքով:

Ես... ես ասես ոչնչացած էի...

Արամը կրկին մի քանի անգամ ներողություն
խնդրելով դուրս եկավ, բայց ժողովուրդը մի լավ
խոսք ունի՝ «ու՞մ է պետք ներկած ձուն Չատիկից
հետո»:

Հայրիկի մոտ շնչարգելություն սկսվեց,
ծխախոտը վառում էր ծխախոտի հետևից, մայրս
ծեռքերը իրար շփելով, գլխին տալով այս ու այն կողմ
եր վազում ինքն էլ չիմանալով, որ մեկիս մխիթարի,
քույրիկս քնած էր, զարթնեց մեր ձայներից և խոշոր,
կլորավուն աչուկները մեզ հառած փորձում էր
գուշակել՝ ի՞նչ է կատարվել ու կատարվում:

Ահա այս քառասյին ու անելանելի իրադրության
մեջ ինձ այլ բան չէր մնում, քան...

Աշխատում էի հայացքս հնարավորինս հեռու
պահել հացամանի մեջ դրված դանակից, այդ
փոքրիկ գործիքն էր միայն ի գորու վերջակետելու
անասելի տառապանքներիս շղթան: Միայն այդ
մտքից արդեն իսկ սարսռում էի, որքան էլ նման էի
սեղանին դրված և մաս-մաս բաժանված հացին,
այնուամենայնիվ պարտավոր էի ուժերի վերջին
լարումով հավաքել ինձ և ամբողջանալ. չէ՞ որ ես

միայն իմը չէի, իմ մի մասը այնտեղ էր՝ հայրենիքի սահմանն է հսկում, մի մասս ծնողներինս է, անկախ ամեն ինչից նրանք են ինձ կյանք պարգևել և դեռ սիրում են ինձ, փոքր քրոջս համար էլ պետք է օրինակ լինեի, բայց... ամենամեծ մասս այն փոքրիկն է, որ դեռ ոչինչ չգիտի այս աշխարհի մասին, ես չեմ կարող ձեռք բարձրացնել կյանքիս վրա, այն այլևս ինձ չի պատկանում:

Անձայր գիշերվա խավարոտ շղարշը ծածկեց լույսի բոլոր նշյուկները, նույնիսկ աստղեր չկային, միայն իմ սենյակի փոքրիկ լուսամփոփն էր վառ, որը վերջին մնացած կաթիլ հույսն էր ավելոծված կյանքիս անհանգիստ օվկիանոսում: Այդ անմար լույսը այն փոքրիկն էր, որ այս գիշեր տակնուվրա արեց ներսս, նա զգում էր, որ մոր ժպիտը թաց է: Նոր բացվող առավոտը թախծախառն էր, սառը, երեկ անձրևել էինք ես ու երկինքը, ես արտասվում էի աչքս երկինք գցած, երկինքն էլ ընկերակցեց ինձ, որ մենակ չմնամ և չխելագարվեմ լացիս ուժգնությունից, նա ինձնից ավելի բարձր էր գոռում:

-Երևի ես տարի էլ բերքը կփչանա, ես ի՞նչ եղանակ է անում ես անտերը,-ինքնիրեն խոսեց մայրս դուրս գալով պատշգամբ:

-Դու քո տված բերքից խոսա, որ երեսին նայելով մնացինք, ամբողջ աշխարհով մեկ խայտառակ եղանք,-հորս հեզնական տոնը թույլ չտվեց մտնել

հյուրասենյակ, որոշեցի մի փոքր սպասել և ականա ականջ դրեցի նրանց խոսակցությունը:

-Է,-միայն մեկ տառով արձագանքեց մայրս խոր հոգոց հանելով:

Ամոթի ու մեղքի ծնկի բերող զգացումից ներսս եռում էր, մի պահ նույնիսկ թվաց՝ մարմինս են թոնրի մեջ խորովում: Ծնողներիս հույսերն ու ներաշխարհը այնպես էի փշրել, որ անգամ հայրս անունս արտաբերում էր զզվանքով, ավելի ճիշտ չէր էլ ուզում արտաբերել:

-Դրա անունը չեմ ուզում լսեմ, ամոթն էլ մարդու համար ա, ես մի քանի օրը տենամ ոնց ա, զանգեմ էն Գևոյին. կարող ա մոտները մայրառնի գործ ըլի գնամ գլուխս ազատեմ ես խայտառակությունից,- հորս այս որոշումը, որը, անշուշտ, երեկվա խառնակ իրադարձությունների ծնունդն էր, մորս թևաթափ արեց:

-Դե ասա մենք էլ մնանք էստեղ մեռնենք, մեր երեխեն ա ի՞նչ անենք, ոնց չհավատանք, ո՞նց երես թեքենք,-մայրս էլ հորս պես կարծում էր, որ Արամն է երեխայիս հայրը և իրենց համոզմունքը հաստատում էին նաև այն հանգամանքով, որ ես հանկարծակի հայտնվեցի գյուղում և անսպասելիորեն փոխվեցին հայացքներս ու զգացմունքներս դեպի դասընկերս:

-Չի՛ էլ ամաչում, որք երեխոււ վզին խալիսի լակոտին է փաթաթում, հլը դրա մտքի թռիչքին ու

կեղտոտ մտքերին, քաղաք եկավ, աչքը բան տեսավ,-հորս զայրույթը դուրս էր հորդում ասփերից:

-Պա՛պ Արամը իմ երեխայի հայրը չի,-վերջապես չկարողացա զսպել ինձ և սենյակ մտնելով փորձեցի նորից բացատրել նրանց, բայց անօգուտ...

-Անառա՛կ,-հայացքն աչքերիս հառելով ասաց հայրս,-թու՛ք քո նամուսին, հարամ ըլի կերածդ կաթը: Եթե մայրս չկանգներ մեր մեջտեղում՝ հորս հերթական բռունցքի հարվածը բաժին կհասներ ինձ ու երեխայիս:

-Ի՞նչ ես անում, մի՛ մոռացիր, հղի է,-արցունքոտ աչքերը սրբելով, հեկեկալով աղերսում էր մայրս: Հայրս ծխախոտի հերթական գլանակը վառելով դուրս եկավ տնից, դուռը հետևից այնպես ուժգին փակելով, որ մի պահ թվաց հետ շրջվելով մուտքի դուռը պիտի տեսնեմ հատակին հազար կտոր եղած:

-Ես էլ էսպես չե՛մ կարող, ես կգնամ, կհեռանամ տնից, դուք էլ մոռացեք, որ աղջիկ ունեք, մի՛ հավատացեք, ժամանակը կգա, կտեսնեք,-խոսում էի արագ-արագ և անզորությունից բռունցքել էի ձեռքերս, կծոտում էի շուրթերս...

Հեռախոսիս զանգը սթափեցրեց ինձ. նա էր...

Փորձեցի հնարավորինս առույգ երևալ ու արցունքներս թաքցնել, բայց այդ նույն էր, ինչ փորձեի փշուր-փշուր եղած բաժակի կտորտանքները հավաքել ու այնպես կպցնելը, որ հետքը չերևա: Դեռ բարևին չպատասխանած լացիս ձայնը տակնուվրա արեց ներաշխարհը, հարցերի

տեղատարափը չէր դադարում՝ ո՞վ է քեզ նեղացրել, ի՞նչ է եղել, երեխեն ո՞նց է...

Ես այս պահին ամենաքիչն էի ցանկանում ենթարկվել հարցաքննության և ամենևին չէի ուզում իմ թախիծով վարակել նրա հոգսաշատ առօրյան: Խաբեցի նրան ասելով, որ երեխան էր խաղում, դրա համար էի մի փոքր անհանգիստ և նաև կարոտն է տանջում: Խոսքերս սպեղանու ազդեցություն թողեցին և միանգամից փոխվեց տրամադրությունը.

-Քո սերն է աշխարհիս միակ արևը, մեր որդու հետ մենք միասին կստեղծենք համերաշխ ու հիանալի ընտանիք, ընտանիքն է հայրենիքի բջիջը և նրա բարեկեցության խորհրդանիշը:

Նրա անկեղծ ու անմիջական խոստովանությունները դեմքիս ժպիտի փոքրիկ շղարշ փռեցին և անասելի կարոտեցի նրան, ամբողջ հոգով տենչացի, որ ժպիտը համբուրի ժպիտիս և աչքերը թաղվեն աչքերիս մեջ...

Անջատեցինք հեռախոսը և Էկրանը պարուրեցի անթիվ-անհամար համբուրներով, ես զգում էի նրա բույրը, շնչառության տաքությունը, ձեռքերի դողը, այնպես էի ուզում գրկել նրան, պատմել, թե ինչ է կատարվում ներսումս, ինչպես եմ ցանկանում զգալ նրա
աջակցությունը...

Հայրս նույն դղրդոցով բացեց դուռը և անունս գոռալով կանչեց հյուրասենյակ.

-Դու կգնաս ու կամուսնանաս այդ Արամ կոչեցյալի հետ, հայրենիքի պաշտպան, կյանքից

առանց այն էլ խոշտանգված տղու ուսերին թռնել չեմ տա խալիսի երեխուն փաթաթես: -Պահպ...,-ծայնս դողում էր, վայրկյաներ առաջ արցունքաքամ աչքերս կրկին արցունքի նոր աղբյուրներ գոյացրին:

-Դու խոսելու իրավունք չունես, ծայնդ կտրիր,-հորս ծայնից տան պատերը ասես ճոճվում էին, ձեռքը բարձրացրեց, որ հարվածի ինձ, բայց քույրս սկսեց լաց լինել, որը կասեցրեց հորս մտադրությունը:

-Պահպ, քուրիկը ի՞նչ է արել, ինչու՞ ես գոռում,-հրեշտականման աղջնակը չէր կարող հասկանալ կատարվող դեպքերի պատճառահետևանքային կապերը, ամեն բան նրա համար խորթ էր ու անծանոթ, անբիծ կյանքը դեռ չէր հասցրել սևավորել:

-Մի օր էլ դու ես սրա պես պատիվս գետնով տալու, չէ՛, չէ՛ դուք վերջը ինձ գերեզման կտանեք,-հայրս այս ասելով նստեց առաջին իսկ պատահած աթոռին և ձեռքով բռնեց կրծքավանդակը, նորից սրտի ցավը ծնկի բերեց:

-Պահպ, պահպ ջան, կներես ինձ, բայց ես հիմա որևէ բան անել չեմ կարող, երկու ամիս էլ սպասի՛ր ու երեխայի ծնվելուց հետո ինքներդ ճշմարտությունը կբացահայտեք,-փորձում էի նոր խոսքերով, նոր ձևերով հարթել լարված իրավիճակը:

-Մորդ ասա՛ դեղս բերի, հոգատար աղջիկ մի՛ խաղա, արագացրո՛ւ,-ասեց հայրս կոշտ ու

հրամայական տոնով:
Խեղճ մայրիկը, որ այս ամբողջ ընթացքում մե՛րթ հայրիկին էր հանգստացնում, մե՛րթ ինձ էր լռեցնում, իսկապես, հայտնվել էր երկու քարի արանքում և ամենի մեղավորը միայն ես էի, միայն ես...

Քաղցր ապագայիս երազների խորտակումը միայն տառապանքներիս նախադուռն էր, ծնողներս աչքիս առաջ հյուժվում էին, մեղքերիս պատճառով հալածվում:

Մեր Վանաձոր տեղափոխվելուց արդեն մոտ յոթ ամիս է անցել և հայրս ամբողջ հոգով այրվելով գյուղի կարոտից՝ որևէ կերպ չէր ցանկանում հետ գնալ.

-Ու՛ր գնամ, ի՞նչ ասեմ, ու՛ր փախա, ո՞ր մեկի բերանը կապեմ, սաղի բերանին լեզու դրեցիք,-հայրս այս ամենի ամբողջ մեղավորությունը դնում էր մորս ուսերին, վերագրելով վերջինս տված դաստիարակությանը, բայց, երբ իմ ուժերով համալսարան ընդունվեցի՝ հայրս մորթեց մեր միակ կովը և ամբողջ գյուղում մեծ կերուխում սարքեց և որևէ առիթ բաց չէր թողնում ինձնով հպարտանալու: Այդ ժամանակ օրը մի քանի անգամ կրկնում էր՝ աղջիկս, պարծանքս, ուրախությունս...

Հիմա է, որ դարձել եմ հորս աչքի գրողը, մորս անքուն գիշերների պատճառը, քույրս զրկվել է իր միակ խաղընկերուհուց, բայց ամենքից լքվածն ու մենակը ես եմ, կյանքը կորցրել է երբեմնի պայծառ

գույները, իր ներկապնակից միայն մոխրագույն երանգն է ինձ բաժին հանում:

Այս դեպքերը անթաքցնելի և շատ խորը ոտնահետքեր թողեցին հոգումս, աչքերիս արցունքը չի դադարում, այո՛ւ Արամը, այլևս ինձ չեր անհնազատացնում, բայց փոխարենը հորս անհիմն մեղադրանքները բուժ դանակով սղոցում էին մարմինս, արնաքամ թողնում:

Երկու ամիս անց էլ մեր տանը ամեն ինչ նույն է, ուղղակի միասին ենք ապրում, մի տանիքի տակ, բայց միմյանցից մեկուսացած ենք, անտարբեր, նաև մեկմեկու նկատմամբ գաղտնի հոգատար: Շատ անգամ է եղել, երբ ուժասպառ ընկած եմ եղել բազմոցին, որի անունը դնում էի հանգստանալ, կամ ննջել և հայրս խոր հոգոց հանելով ծածկում էր ինձ, նստում կողքս, բարձրաձայն մտորումների դարձնում ունկդիր, բայց ամեն արտաբերած տառն ու խուլ շնչառության հեքը լսելով հանդերձ՝ չէի համարձակվում նույնիսկ աչքերս թարթել...

Նա ճիշտ էր, իսկ ես նրա պատկերացրած մեղավորը չէի...

Մայրս այս վերջին ամիսներին դարձել էր մարմարիոն արձան, միշտ կանգած էր ու միշտ գունատ: Շուրթերը ճաքել էին, աչքերը՝ խամրել, ինչպես իմ հանդեպ ունեցած նրա վստահությունն էր ճաք տվել և փչել, հանգցրել հույսի վերջին ճրագը:

Նրան, իմ սիրելիին, որ արդեն 8 ամսվա ծառայող էր՝ ընդհամենը 1-2 օրից պետք է

հանդիպելիք՝ ես ու մեր նորածին զավակը: Բայց...
շաբաթը ուրբաթից շուտ եկավ...
Գարնան երկրորդ ամսվա առաջին օրն էր, միշտ
մտածում էի, որ մեր որդին կծնվի ապրիլի մեկի և
երբ նրան հայտնեմ այդ հրաշք լուրը՝ չի՛ հավատա,
կմտածի, որ օրվան համահունչ կատակ է...

Ցավերս բռնել էին, բայց ներսիս ցավը
կրկնապատկվել էր, քանի որ արդեն երկու օր էր
նրանից լուր չունեի՝ զանգերս մտում էին
անարձագանք, բազում հարցեր ու կասկածներ
այդպես էլ մնացին անպատասխան:

Արցունքն աչքերիս, հայացքս ճամփին՝
ծնողներս ինձ տարան հիվանդանոց. ժամանակն
էր...

Չնայած ծնողներիս խուսափողական ու անորոշ
պատասխաններին, ինձ համար այդպես էլ հանելուկ
մնաց, թե կյանքիս լավագույն օրը չցանկացա՞վ, թե՞
չկարողացավ լինել կողքիս, միգու՞ցե, նրան ևս
հասել էին այն ստահոտ լուրերը, թե իբր երեխայիս
հայրը անօրեն Արամն է և նա իր լռությամբ ու
անտարբերությամբ էր որոշել իր բաժին
հակահարվածը հասցնել...

Անհանգիստ էի, ջղաձիգ, ուզում էի բոլորին
պատահ-պատահ անել, ամեն անցնող վայրկյանի
հետ մարում էր հույսի շողը և սպասումս դառնում էր
անկառավարելի: Հեռախոսս, չնայած բժիշկների
արգելքներին՝ փորձում էի ամեն գնով պահել կողքիս.
սպասմանս հույսը չէր կոտրվում...

Մեկ ամբողջ օր մնացի անասելի ծանր ապրումներով, ցավերից գալարվում էի, բայց հայացքս միշտ պահակ կանգնեց և հույսս միշտ հավատաց...

Հաջորդ օրը դարձյալ չեկավ: Օրը երեկոյանում էր: Անհանգիստ էինք: Ստիպված էի ճաշակել նրա կողմից ուղարկված անտարբերության դառը պտուղները, որոնք այնքան քաղցր էին և այնքան ցանկալի, միայն այն պատճառով, որ անգամ նրա անտարբերությունը ինձ հարազատ էր և իր բույրն էր հիշեցնում...

Ապրիլի երկուսին, ժամը ուղիղ երկուսին՝ լսվեց իմ և նրա առաջնեկի առաջին ճիչը, իսկ նա՝ նոր հայրացածը, դեռ լռում էր...

Ես և որդիս այն աշխարհից վերադարձանք և մեզ սպասող չկար, նա՛, նա՛ չկար, նա՛ չէր եկել... Մայրս փորձում էր հուսադրել ինձ, վստահեցնելով, որ գուցե, զորամասում են խնդիրներ եղել, բայց ինչպես կարելի է արևահոսող ջրվեժը մատի մի հպումով մեղմել: Որդիս առողջական խնդիրներով էր ծնվել և նրան չէին բերում ինձ մոտ, բժիշկները հարցերիս ոչ միանշանակ, անորոշ պատասխաններ էին տալիս, մայրս ևս փոխված էր, ուրիշ: -Մա՛մ, ու՞ր է երեխաս, մա՛, ասա՛ բերեն ինձ մոտ,- մայրս փորձում էր շեղել ինձ մե՛րթ քաղցրեղենով, մե՛րթ հյուսերով, ամեն ինչը մնում էր կոկորդիս, թվում էր փշրված հույսերիս կտորներն են կուլ տալիս:

Հայրս դեռ մեզ չէր տեսել, մտածում էի, որ դեռ բարկացած է, վիրավորված, բայց չէ՞ որ այս նորաթուփ ծնունդն իմ արարքների համար պատասխանատու չէ, նա ևս ծնվել է բոլորիս պես ապրելու բնական իրավունքով: Ես վստահ էի, որ մեր նորաստեղծ, փոքրիկ ընտանիքը կհաղթահարի խոչընդոտները և ամուր կկանգնի զույգ ոտքերի վրա, ինչպես մեր որդին, որ հետզհետե հասակ է առնելու, քայլելու է, ժպտալու և գունավորելու է մեր համատեղ կյանքի հետագա օրերը, անցյալը թողնելով անշունկ:

Որդուս կյանքի առաջին օրը ավարտվեց առանց հորը տեսնելու, բժիշկները տեղի տալով իմ և մորս աղերսանքներին թույլատրեցին, որպեսզի հեռվից տեսնեմ երեխայիս և «բարի գիշեր» մաղթեմ:

Օ՛րոքան փոքրիկ ու անպաշտպան էր նա, այնպես էի ուզում գրկել ձագիս, սեղմել կրծքիս և համբուրել նաև հոր փոխարեն, հայր, որը ծնող դարձավ ժամանակից շուտ և կարոտատենչ սպասմանս սև քող նետեց: Առավոտյան գարթնեցի հորս և արևի համբույրից. առաջինի համբույրը առավել տաք էր և սպասված:

-Պա՛յ,-ընդամենը այս մեկ բառից արցունքներս դարձան անզսպելի:

-Ի՛մ աղջիկ, այժմ ինքդ էլ ծնող ես, արդեն ինձ կհասկանաս,-ասաց հայրս և քնքշաբար գրկեց քրտնաթոր մեջքս:

-Պա՛պ, խնդրում եմ, գնա-ասա բժիշկներին, որ բերեն երեխայիս, միայն մեկ ակնթարթ տեսա և վերջ,-արցունքները լճացել էին ակնախորշերումս և ձայնս հագիվ էր դուրս գալիս:

-Դու պիտի ուժեղ լինես, կյանքը քեզ համար տիպա՞ն անակնկալներ է պատրաստել, դու դեռ ի վիճակի չես նման դաժան փուլերով անցնելու, բայց դու մենակ չես, ես, մայրդ, քույրդ միշտ կողքիդ եմք լինելու, ների՛ր ինձ, եթե փոքր-ինչ աննրբանկատ եմ եղել,-ակնապիշ հայացքս մի անորոշ կետի հառած լսում էի հորս, բայց սպասումս ականջը պահել էր դռան թակոցին:

Երբեմն ինձ թվում էր, որ դուռը թակում են, խնդրում էի բացեն և այդ վայրկյաններին թվում էր, թե սիրտս բուլբուլից շուտ թուռս կթռչի, կհասնի ու կբացի դուռը, որտեղ այդպես էլ ոչ մեկ չէր սպասում. հուսախաբ պատրանքս գլուխը քորելով հետ էր վերադառնում:

-Պա՛պ ջան, իմ երեխան հպարտ ու խիզախ հայր ունի, որը իր պարտքը հայրենիքին տալուց հետո նաև իր հայրական պարտականությունները օրինակելի կերպով կկատարի:

-Աղջի՛կս, ուշադիր ինձ լսիր և չընդհատես, քո ծննդաբերության գիշերը շան որդի ադրբեջանցիները լայնածավալ կրակ են բացել Թալիշի և հարակից շրջանի խաղաղ բնակչության վրա, վիճակը օրհասական է, չնայած մեր հայոց

բանակի մարտունակ պաշտպանվածությանը՝ մենք
Էլ արդեն գոհեր ունենք:

-Պա՛պ, իսկ նա՞, պա՛պ,-ծայնում էի, գրեթե,
ցնորված, հայրս ուշադրություն չդարձնելով ինձ
շարունակեց:

-Բոլորն էլ մերն են, բոլորն էլ մի տան ճրագ են ու
մի հույսի սյուն, մե՛կը հայր է, մյուսը՝ որդի, երրորդը՝
ամուսին, հաջորդը՝ նորահարսի նշանած կամ էլ
սիրեցյալ, բոլորն էլ ունեն սպասող...

-Պա՛պ, ի՞նչ նորություն կա, քանի՞ գոհ ունենք,
ի՞նչ են ուզում այդ անօրենները,-հարցերիս
տեղատարափը ինձ էլ շփոթեցրեց:

-Դեռ պաշտոնապես տվյալներ չեն հայտնում,
գոհերի թիվը ժամ առ ժամ ավելանում է, խնդրում
եմ, դու քեզ հանգիստ պահի՛ր, միայն աղոթի՛ր ու
հավատա՛, հիմա սա է մեր միակ փրկությունը,
ուզում եմ տեսնել, որ քեզ մոտ ամեն ինչ կարգին է,
որպեսզի ես էլ մարտի դաշտ գնամ, թեև ասում են,
որ այդ մի մատ երեխեքը դիրքերից մի քայլ անգամ
չեն հեռանում,-վերջին խոսքերն արտաբերելիս հորս
հայացքն զգալիորեն պայծառացավ, այն և՛ ցավ ու
մորմոք էր արտահայտում, և՛ հպարտություն ու
վրեժ:

Ամբողջ հիվանդանոցը տազնապի մեջ էր,
բժիշկները խուճապահար այս ու այն կողմ էին
վազում, ամեն վայրկյան սպասում էին նոր լուրերի
ու հրամանների, թեև ապատեղեկատվությունը, որ

մուլախոտի պես տարածվել էր համացանցով մեկ՝ ժողովրդին դարձրել էր ոյուրագրգիռ, բայցև՝ միավորել էր ինչպես մեկ մարմին: Բոլորն իրար հետ գրուցում էին շշուկով, տերմիններով ու անհասկանալի, իսկ ես կարծես թե երազի մեջ էի, չէի ուզում արթնանալ՝ իմ տեսած երազն իրականության պես դառնահամ չէր ու չարագուժ: Իմ պատկերացումները մեզ տարան գյուղ, մեր փոքրիկը վազվզում էր այգով մեկ, իսկ նա վայելում էր այն հայրության բերկրանքը, որից ինքը զրկվել էր դեռ վաղ մանկությունից. ինչու՞ է ճակատագիրը այսքան անբարեհաճ, ինչու՞ է հին սցենարը կրկնում, բերելով նոր զոհեր...

Հայրս այս օրերի իմ միակ հուսալի լրատուն էր, մեկը, ով մի խոսքով կարող էր հիմնովին փլել այդքան դժվարությամբ կառուցած ընտանիքիս պատերը և մեկ խոսքով էլ կարող էր սպեղանել մարմնիս ու հոգուս ամենախոր վերքերը:

Ա՛խ այդ սոսկալի անորոշությունը, որ քայքայում է մարդու հուզաշխարհն ու հույսերի փունջը թառամեցնում: Ես գիտեի, որ մեր տղաները քաջ են, անպարտելի, մենք դժվարություններ տեսած սերունդ ենք և այժմ մեզ դժվար է ծնկի բերել, մեր ծնողներից շատերը արցախյան գոյամարտի հերոսներն են և արյունը ջուր չի դառնում. հերոսների որդիները ևս հերոս են ծնվում: Ես և հասակակիցներս միայն գրքերից գիտենք

վերադառնում՝ ծաղիկները թողնելով նրանց թարմ հողաթմբերին...

Մենք էլ քայլում էինք նրանց հետ ու նրանց պես նույն անփարատելի վիշտը հոգում թաղած և նույն վրեժաճով հայացքը աշխարհին հառած: Մեր գերեզմանը ևս երիտասարդ, տասնիննամյա հերոսի էր:

Նա էր:

Նա զոհվեց գիտակցված մահով, միաժամանակ փրկելով չորս զինակիցներին, մահը եղել էր վայրկենական՝ գենքը ձեռքին, աղոթքը՝ շուրթին, հայացքը՝ հեռվում, սիրտը՝ հայրենիքում...

Նա չտեսավ իր նորածին որդուն, որի մասին երագեց ամբողջ կյանքում, նա և իր զինակիցները իրենց կյանքը տվեցին, որպեսզի մեր աղջիկները նոր զավակներ ծնեն և շենացնեն հայոց հողը, հող, որը միայն հային է, այդ հողը չապրված կյանքերի գին ու թափած քրտինքի համ ունի, այն տարածք չէ՛ որ վաճառվի ու հանձնվի. ամեն անկյունը սրբավայր է՝ ուր պիտի ապրենք արարելով: Մեր որդին դեռևս առողջական խնդիրներ ունի. հղիության լարված ընթացքը մեր զավակին զրկել է լսելու և խոսելու ունակությունից, թեև բժիշկները վստահեցնում են, որ այն ժամանակի ընթացքում հնարավոր է վերականգնել:

Արդեն երեք ամիս է, ես ծնողներիս հետ ապրում եմ Արցախում, ուսումս կշարունակում

Ստեփանակերտի պետական համալսարանում և ավարտելուց հետո կդասավանդեմ այն գյուղի դպրոցում, որտեղ քաջաբար զոհվեց նա՝ իր զինակից ընկերների հետ միասին:

Եկող սերնդին պետք է ականատեսի աչքով պատմենք մեր քառօրյա պատերազմի խիզախ մարտիկների անձնուրաց սիրո, անսահման հայրենասիրության և կիսատ թողած երազանքների մասին:

Մեր Ազատը օրեցօր մեծանում է և նմանվում հերոս հորը, հայրը չհասցրեց ճանաչել որդու հայրությունը, բայց փաստը խոսուն է փաստաթղթերից առավել, որքան էլ հազարավոր արամներ փորձեն կեղծ տերություն հաստատել իրենց չպատկանող տարածքներում և հայրանալ, նրանք միևնույն է անզոր կգտնվեն և դուրս կշարտվեն:

Մեր Ազատը չի՛ լսում, որովհետև ասվող ճշմարտությունները սուտ են, Ազատը կխոսի այն ժամանակ, երբ անօրեն, անպատկառ թշնամին կընդունի իր պարտությունը...

Հ.Գ. Իմ այս ստեղծագործությունը, ես վերնագրեցի՝ «ՆԱ» և գիտակցաբար գլխավոր հերոսին չկոչեցի որևէ անունով, որովհետև ցանկանում եմ յուրաքանչյուրդ նրան տաք ձեր հերոսի անունը:

Կազմող՝ Սոնա Վանյան
Խմբագիր-սրբագրիչ՝ Սոնա Վանյան
Տեխ.խմբագիր՝ Գուրգեն Մուրադյան
Նկարների հեղինակ՝ Կարեն Բաբաջանյան

